№ 41 ՇԱԲԱԹ, 25 ՓԵՏՐՎԱՐԻ

1912

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 25 ՓԵՏՐՎԱՐԻ № 41

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.

Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը՝ 80 կոպ.: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՅՍՕՐ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Ա. ԼԻՍՕՎՍԿԻԻ
„Національность и Націонализмъ"
ԹԵՄԱՅՈՎ:
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին: Գները պակասեցված են: Աշակերտական տոմսակները 50 կոպ.: Տոմսակները վաճառվում են: Մանրամասնութիւնները աֆիշաներում:
(առ.) 123. 1—1

ԹՈՂ ԽՕՍԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

I

Մենք կովկասցիներս յիշեցրել ենք և դարձեալ յիշեցրել բարձր շրջաններին մեր խոշոր կարիքների մասին, բայց մինչև այժմ չենք տեսնում իրագործված ոչ մէկը այդ կարիքներից:

Մենք չենք յոգնում վերստին յիշեցնելուց, դարձեալ և դարձեալ կրկնելուց, որովհետև այդ կարիքները մեզ համար էական են, կենսական, անհրաժեշտ և անհերքելի.

Այսօր մենք մտադիր ենք խօսել այդ կարիքներից մէկի բաւարարութեան խնդրի մասին, բայց ոչ այնքան ըստ բովանդակութեան, որքան ըստ այն ուղղութեան, որ նա պէտք է ստանայ արագ ընթացք և դրական լուծում ստանալու համար:

Դա բարձրագոյն դպրոցի բացման խնդիրն է մեզանում:

Մի դժբաղդ վիճակ ունի այդ խնդիրը մեզանում:

Յարուցվել է նա մի քանի անգամ, մշակվել է, հասուն աստիճանի հասցրըվել, յետոյ հանդիպելով որոշ խոչընդոտների՝ յետաձգվել, և շնորհիւ հանգամանքների՝ ժամանակաւորապէս դէն մղվել ասպարէզից:

Մենք նորից այդ խնդրի տենդային քննութեան շրջանումն ենք: Պետերբուրգում, մինիստրական շրջաններում նա թէև դեռ ևս ցոյց չէ տալիս նպաստաւոր բնոյթ Կովկասի օգտին, այնուամենայնիւ նա հերթական քննութեան առարկայ է: Պետական Դումայի և Պետական Խորհրդի շրջաններում կովկասեան բարձրագոյն դպրոցն ունի շատ պաշտպաններ: Կովկասում այդ խնդիրը զբաղեցրել է կովկասեան Փոխարքային և ներկայումս էլ շատ մօտ է նրա սրտին, իսկ մեր հասարակական խաւերում նա այժմ հանդիսանում է նրա գիտակցական պահանջներից մէկը:

Եւ այնուամենայնիւ խնդիրը մինչև այժմ բարեյաջող լուծման ընթացք չէ ստացել:

Բարձր շրջանները ծանօթ չեն մեր երկրի հասարակական կարծիքի հետ և տրամադիր են ենթադրել, թէ դա մէկ կամ երկու մարդու հնարած մի հարց է, որը հանդէս է բերվում գուցէ կողմնակի նպատակներով:

Այդպիսի թիւրիմացութիւններ պէտք է ցրել բոլորովին:

Պէտք է հասկացնել հեղինակաւոր շրջաններին, որ վերջին երկու ամեակում մեծ ժողովրդականութիւն է ստացել Կովկասում կուլտուրական առաջադիմութեան գաղափարը: Երկաթուղիների կառուցվելը, նաւթի և հանքերի շահագործութիւնը, Հիւսիսի և Արևմուտքի հետ անդադար շփումը, Կասպից և Սև ծովերի հաղորդակցութեան դիւրութիւնները, երկրի արդիւնաբերութեան մէջ առաջ եկած փոփոխութիւնները և կատարելագործութիւնների անհրաժեշտութեան գիտակցութիւնը հերթական և անխուսափելի դարձրին առհասարակ կրթութեան, և իբրև նրա պսակ՝ բարձրագոյն կրթութեան խնդիրը:

Եթէ մի երեսուն տարի սրանից առաջ բարձրագոյն դպրոցի խնդիրը ներկայանում էր իբրև մի բարի ցանկութիւն և մի հաճելի նորութիւն, այսօր նա ցցվել է մեր առաջ իբրև պահանջ, իբրև երկրի կարիքների բաւարարութեան զօրեղ միջոցներից մէկը, իբրև այնպիսի անհրաժեշտութիւն, որը այլ ևս անտես առնել և դէն մղել չէ կարելի:

Եւ այժմ, երբ մի կողմից չարանենգ, միւս կողմից բթամիտ տարրերը նորից զինվում են տապալելու կովկասեան բարձրագոյն դպրոցի առաջարկը, պէտք է խօսի մեր երկրի հասարակական կարծիքը և ցոյց տայ, որ նա գիտակցաբար և համոզմունքով է դրել ասպարէզի վրա հերթական լուծման համար բարձրագոյն դպրոցի խնդիրը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 փետրվարի

Պետերբուրգ.—Քաղաքագլուխը անգլիական համայնքների պալատի նախագահից ստացաւ շնորհակալութեան հեռագիր համայնքների պալատին տուած ընծայի համար:

Որոշված է երկարել արտակարգ պահպանութեան ժամանակը Բագուի քաղաքապետութեան մէջ մինչև 1912 թ. սեպտեմբերի 4-ը և երկարել Կովկասի Փոխարքայի լիազօրութիւնները Կասպից ծովի բոլոր առևտրական նաւատորմի վերաբերմամբ մինչև 1912 թւի սեպտեմբերի 4-ը՝ Կասպից ծովի վրա կանոնաւոր նաւագնացութիւն պահպանելու նպատակով:

Մինիստրների խորհուրդը քննեց ճան. հաղ. մինիստրութեան առաջադրութիւնը չեռնոմորական երկաթուղու կառուցման, նրա շինարարական արժողութիւնը հաստատելու, օրէնսդրական կարգով Կովկասեան լեռնաշղթայով երկաթուղի անցկացնելու նախնական աշխատանքները կատարելու համար դրամներ յատկացնելու մասին:

Փետրվարի 20-ին համալսարանում ապօրինի ժողով գումարելու համար քաղաքապետը վարչական կարգով բանտարկեց 3 ամսով ուսանող Էյամօնդին, 2 ամսով՝ 62 ուսանողների:

—

Պետրոկով.—Մացօխի գործի դատավճիռը: Դամազիյ Մացօխը դատապարտված է 12 տարով տաժանակիր աշխատանքների. Ելենա Մացօխը՝ բոլոր իրաւունքներից զրկման և 2 տարով բանտարկութեան. Սառըչեվսկին և Օլէսինսկին՝ բոլոր իրաւունքներից զրկման և բանտարկութեան—առաջինը՝ 5, երկրորդը՝ $2^1/_2$ տարով. Պեանկօն՝ 4 ամսով բանտարկութեան. Բլասիկեվիչը՝ 1 տարով բանտարկութեան. Ցիգանովսկին՝ 7 օրով բանտարկութեան. Պետկեվիչը արդարացաւ:

—

Վիէննա.—Մինիստր-նախագահ Կուէնխեդերվարին կայսրին խնդրագիր ներկայացրեց ունգարական կաբինէտի հրաժարականի մասին:

—

Վիէննա.—Հաստատվում է այն տեղեկութիւնը, որ մարտի 10-ին Վիէննա են գալու Վիլհէլմ կայսրը, պրինց Աւգուստ-Վիլհէլմը կնոջ հետ և պրինցուհի Վիկտորիա Լուիզան:

—

Բերլին.—Րայխստագի նակազի մասնաժողովը նակազի մէջ փոփոխութիւն է մտցնում՝ իրաւունք տալու րայխստագին հարցապնդման քննութեան ժամանակ հաւանութիւն կամ անհաւանութիւն տալ պետական կանցլերին: Մինչև օրս րայխստագը իրաւունք չունէր քննել պետական կանցլերի գործելակերպը:

—

Պարիզ.—Պատգամաւորների և սենատորների բազմամարդ ժողովում բացվեց առևտրական ու արդիւնաբերական խմբերի կոնֆեդերացիայի կոնգրէսը:

—

Լոնդոն.—Համայնքների պալատում Ասկվիտը յայտնեց, որ հօմրուլի օրինագիծը կը ներկայացվի Զատկից ոչ շուտ, բիչէն՝ մարտի 20-ին:

Երեք յայտնի սուֆրաժիստուհիներին մեղադրում են դաւադրութեան մէջ: Գրաւականով ազատ թողնելու միջնորդութիւնը մերժվեց:

Սուֆրաժիստուհիները անկարգութիւնները վերսկսեցին ջարդելով պատուհանները Բեռդէնգա թաղում: Շատերը կալանաւորվեցին:

—

Վաշինգտոն.—Գեներալ շտաբը մշակել է մի ծրագիր, որով մեքսիկական սահմանագլխում զէնքի են կանչվում 100,000 ամերիկացի զինւոր: Ամերիկացիները հեռանում են Մեքսիկայից:

—

Մանագուա.—Միացեալ-Պետութիւնների պետական քարտուղար Նոկսի տեղումս գտնվելու առիթով երկու լրագիր տպել են Ամերիկայի դէմ ուղղված յօդուածներ: Որոնցով առաջարկվում է ուժանակ գործադրել Նոկսի դէմ: Երկու խմբագրութիւնների անդամները ձերբակալվեցին:

—

Մադրիդ.—Հաւաստացնում են, թէ ֆրանսիական և սպանական պատուիրակները համաձայնութեան են եկել մաքսանների կարևոր հարցում:

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 փետրվարի

Հռոմ.—Հակառակ տեղեկութիւններին, Ստեֆանիի գործակալութիւնը հաղորդում է, որ Իտալիան վայելում է գործելու լիակատար ազատութիւն ամենուրեք, բացի Ադրիատիկ և Յոնիական ծովերի օսմանեան ափերից, և ոչ մի մեծ պետութիւն մինչև այսօր խորհուրդներ չէ տուել իտալական կառավարութեանը պատերազմական գործողութիւնները սահմանափակելու:

Գեներալ Րէյսօլին հեռագրում է, որ իտալական զօրքերը Մերգէբի բարձունքների վրա փետրվարի 21-ին ռմբակոծվեցին թշնամուց, աջակողմեան թևից: Կռիւը տևեց ամբողջ գիշեր: Թշնամին յետ նահանջեց խոշոր կորուստներով:

—

Պէրիմ.—Իտալական «Կալաբրիա» յածանաւը ռմբակոծեց Շէյխ-Սաիդը: Թիւրքերը պատասխանեցին: Յածանաւը մեկնեց դէպի հիւսիս:

—

Կ. Պոլիս.—Գիշերային վարժութիւնները Դարդանէլում ցոյց տուին նեղուցը պաշտպանելու համար ձեռք առնված միջոցների պիտանիութիւնը:

—

Հռոմ.—Մարտի 17-ին արձակվում են 88 թւի պահեստի զինւորները, որովհետև 91 թւի զինւորների վարժութիւնները աւարտվել են:

Պալատ: Ֆինանսների մինիստրը յայտնեց, որ հինգ ամսվայ պատերազմի ընթացքում եկամուտները աճեցին, որի պատճառով այս տարվայ նախահաշւով ծախքերը կը ծածկվեն կիսով չափ առանց դեֆիցիտի. Ֆինանսների դրութիւնը այն աստիճան հաստատուն է, որ երկիրը առանց փոխառութեան ու առանց նոր հարկերի կարող է տանել պատերազմի ծանրութիւնը (ծափահարութիւն):

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 փետրվարի

Պէկին.—Լուրերի համաձայն՝ մինիստր-նախագահի ընտրութիւնը և կաբինէտ կազմելը տեղի են ունենալու Նանկինում, ուր իբրև նախագահի ներկայացուցիչ գնալու է նրա օգնական Լիւանխունը: Կաբինէտի կազմակերպումից յետոյ նոր կառավարութեան անդամները Պէկին կը գան առանձին պահակախմբի ուղեկցութեամբ: Կողոպուտները մայրաքաղաքի շրջակայքում շարունակվում են: Ապստամբ զօրքերը կողոպուտներ են սկսել Խէնանի նահանգում:

—

Պէկին.—Կողոպուտները Շանդունում շարունակվում են: Օտարազգի զինւորներ կան ընդամենը 6000, մինչդեռ լաւ զինված չինացիների թիւը 100 հազարի է հասնում:

—

Մուկդէն.—Ի նկատի ունենալով, որ տեղիս զօրքի վրա յոյս դնել չէ կարելի, գեներալ նահանգապետ Սինմինտինից կանչեց 77-րդ գնդին:

Ցեղափոխականների մի վաշտ Անշանժուանի մօտերը ջարդվեց կառավարական զօրամասից:

—

Դիրին.—Նահանգապետ Չէնչաօչանը հեռագրեց Իւանշիկային, թէ Պէկինի և Նանկինի կառավարութիւնների միաժամանակ գոյութիւնը ստեղծում է քաղաքական խառնաշփոթութիւն և դժուարութիւնների մէջ է ձգում իշխանութիւններին: Նահանգապետը խնդրում է շուտով կազմել կօալիցիօն կառավարութիւն:

—

Կուլջա.—Նոր Սուլդունում սիբինցի [illegible] դի պահեստը: Ձերբակալվեցին 2 մարդ: Ցեղափոխականները կազմակերպում են խմբեր դունգաններից, չը վստահանալով սիբինցիներին:

—

Վաշինգտոն.—Պէկինում պաշտօնավարող ամերիկական դեսպանը դիմեց Մանիլիայի իշխանութիւններին՝ խնդրելով Պէկին զօրքեր ուղարկել:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 փետրվարի

Թէհրան.—Աւտոմօբիլով եկաւ Ղազվինի զօրամասի հրամանատար Գաբաևը, անցնելով ամբողջ ճանապարհը 7 ժամում:

—

Թաւրիզ.—Ջէնջանում Ֆարման-Ֆարմայի կողմնակիցները սպանել են տեղական ոստիկանապետին և ձերբակալել են նահանգապետին:

—

Բարֆրուշ.—Եկաւ Աստրաբադ քաղաքի պաշտպանութեան համար 19-րդ Թուրքեստանեան գնդի չորրորդ վաշտը: Վաշտը իջևանեց սարդարի քարվանսարայում:

—

Ուրմիա.—Հիւպատոսարանի շինութեան մէջ բաստ նստած նահանգապետին տրվեցին առանձին սենեակներ: Այգու մէջ տնկված են տասնեակ վրաններ, ուր տեղաւորվել են նահանգապետի շքախումբը և դիւանը: Ընդունելութեան ժամերին նահանգապետը գտնվում է վրաններում, ուր և գործերն է քննում:

—

Ջուլֆա.—Խօյ անցան հինգ աւտոմօբիլներ:

ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 փետրվարի

Լոնդոն.—Ասկվիտը, Գրէյը և Լլոյդ-Ջօրջը խորհրդակցեցին հանքային բանւորների կոմիտէի հետ:

Համայնքների պալատ: Չերչիլը, պատասխանելով հարցապնդման, ասաց, որ երկիւղ է կրում, թէ բոլոր նաւերի կառուցումը կարող է դանդաղել գործադուլի շարունակութեան դէպքում: Ասկվիտը հերքում է այն լուրը, որ իբր թէ կառավարութիւնը վաղը օրինագիծ է ներկայացնելու մինիմալ աշխատավարձի մասին. կառավարութիւնը նպատակ ունի հնարաւորութիւն տալ պալատին քննել քարածխագործ բանւորների գործադուլը. բայց չէ կարող օր նշանակել վիճաբանութիւնների համար դրութեան անորոշութեան պատճառով:

Գործատէրերի վարվեցողութեան պատճառով Սուօնսի շրջանում երկու քարածխային հանք չեն կարողանում ջուր ստանալ: Եթէ գործադուլը շարունակվի, ջուր կը ստացվի հազիւ երկու ամսից յետոյ: Հիւսիս-Արևմտեան ծովափի նաւատէրերը քարածուխի գները անսովոր կերպով բարձրացրել են: Իւրաքանչիւր տօննը այժմ վաճառվում է 30 շիլլինգով, որ վերջին 20 տարում եղած չէ երբեք: Տայն գետին մերձ շրջանում արդիւնաբերական հաստատութիւնները դեռ մնում են փակված.

Դեռ ևս աջողութիւն ձեռք չէ բերված քարածխային գործադուլը վերջացնելու գործում, թէև բանակցութիւնները երկուստեք շարունակվում են:

—

Կիլ.—Անգլիական գործադուլի պատճառով զգացվում է քարածուխի պակասութիւն. Նաւագնացութիւնը չափազանց կրճատված է:

—

Մարսէլ.—«Կօմպ. Ժեն. Տրանս.»-ը յայտարարում է, որ նաւերի արագութիւնը պակասեցված է Անգլիայի քարածխային գործադուլի պատճառով:

—

Լիվէրպուլ.—Ուայդստար նաւային ընկերութիւնը յայտարարեց, թէ իր վրայից վերցնում է պատասխանատուութիւնը ապրանքները իր ժամանակին տեղ հասցնելու համար:

—

Լօնդոն.—Ոստիկանութիւնը միջոցներ է ձեռք առել արդիւնաբերական շրջանում գործադուլի դէպքում: Կառավարութիւնը հաստատ վճռել է պաշտպանել աշխատել ցանկացողներին, որոնց թիւը շատ մեծ է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԸ ՔԱՅՔԱՅՎՈՒՄ Է

> ...Արդէօք որքան գերդաստաններ
> ընկնում են այսպէս:
>
> Մ. Նալբանդեան

I

Հինաւուրց, անողոք ու կործանիչ գաղթը շարունակվում է, գիւղը դատարկվում: Արդիւնաբեր կենտրոնները դէպի իրանց են քաշում սնանկացած գիւղացիների խմբեր. գաղթում են 8 տարեկանից սկսած՝ երիտասարդներ, ծերեր, ընտանիքներ:

Զւում են անվերջ, վտարանդի ու տաբագիր եղած, և գիւղը ամայանում է, վաղուց «խորթ մայր» դարձած գիւղը, որ այլևս, ըստ երևոյթին, անզօր է կերակրել իր բնակիչներին: Գաղթում են, և ընկնում է գիւղական արդիւնաբերութիւնը. մշակ չը կայ, աշխատող չը կայ, և դաշտերը խոպան են, մարգերն անբերրի, գոմերը դատարկ, բիւրաւոր օջախների ծուխը կտրված: Եւ, սակայն, հեռու հորիզոնները դիւթական անուրջների պէս քաշում են դէպի իրանց՝ կարօտեալների անվերջ կարաւանները...

Դուք տեսնում էք, թէ ինչպէս գիւղի երիտասարդութիւնն այլասերվում է սողոմենբում, դեգերում տասնեակ տարիներով օտար հորիզոնների տակ, հիւծվում բարոյապէս ու մարմնապէս և գիւղ գալիս հիւանդ ու ախտաժէտ... գիւղում բացվում են գինետները և այնուհետև՝ արբեցողութիւն, անառակութիւն, այլասերում...

Եւ գիւղը քայքայվում է:

Ինչու:

Ըստ երևոյթին՝ պատասխանը պարզ է, մեր դժբաղդ իրականութեան տասնեակ տարիներով տուած պատասխանը. գիւղում ապրուստ չը կայ:

Չը կայ...

Սակայն որքան ճիշդ է այդ՝ մեր նպատակն է ստուգել:

II

Պատմական ակսիօմա է, որ մարդը, ուր և բնակվելիս լինի նա, պարապելու է այն ձեռնարկութիւններով ու տնտեսութեամբ, որոնց նպաստիչ, արդիւնաւոր միջավայրը է հանդիսանում տեղական բնութիւնը:

Բնութիւնն ամենքի աննախանձ մայրն է և ամենուրեք, ասես՝ գորովագութ սիրով, պատրաստ ունի զաւակների կերակուրը, որ կարելի է ստանալ՝ շահագործելով տեղական կենսական պիտոյքներ արտադրող աղբիւրները։

Հակառակն անելով՝ փնտռելով այն, որ չը կայ իր միջավայրում, մարդը յանցագործում է բնութեան դէմ և տուժում, ունայն աշխատանք ու ճիգ թափելով։ Չէ կարելի Սառուցեալ Ովկիանոսի ափերին խաղող մշակել, և գուցէ ոչ ոքի մտքով էլ չանցնի այդ. բայց նոյն Սառ. Ովկիանոսը իր բնաբերքով կերակրում է բազմաթիւ մարդկանց։

Մեր երկիրն, ինչպէս և նրա բնակչութիւնը նոյն օրէնքին են ենթարկված. և եթէ մենք մեր միջավայրի էական արդիւնաբերութեան, բնաբերքի աղբիւրները չը գտնենք, չը մշակենք, զարգացնենք և կատարելագործենք, այլ դրանց փոխարէն պարապենք այլ ձեռնարկութիւններով, որոնց աղբիւր չէ հանդիսանում մեր միջավայրը, մայր բնութիւնը, կրկնակի յանցանք կը գործենք, առարկելով որ երկրում ապրուստի միջոցներ չը կան, որ գիւղացին անկարող է այլ ևս գիւղում ապրել…

III

Այս էական հիմքով մօտենանք խնդրին և աշխատենք՝ պարզել, թէ որքան մեր գաւառական հասարակութիւնը, գիւղացիութիւնը ճանաչում է իր միջավայրը և որքան է աշխատում զարկ տալու զուտ տեղական ձեռնարկութիւնների կատարելագործմանը և, հետևապէս, իր բռնած ընթացքին ու գործելակերպին համաձայն՝ ինչ արդիւնք պիտի ստանայ նա։

Ճանաչել բնութիւնը՝ մարդուս առաջին պարտքն է այդ, կենսական հարցերից կարևորագոյնը։ Բայց մեր գիւղացիութիւնը, որ էականն է, մինչև այժմ չէ՝ ճանաչել բնութիւնը։ Գիւղացին դարերով ապրել է նոյն հողի վրա, անվել, առանց ճանաչելու իր շրջապատը, առանց գտնելու միջավայրի բնական հարստութիւնները։

Իսկ այս շատ էական ու խոշոր պատճառ է բնութիւնից պատժվելու և թափած աշխատանքի փոխարէն սպասված՝ արդիւնք ստանալու։ Շատ եմ շրջել հայ գիւղերը, ուսումնասիրել տեղական պայմանները և ցաւով տեսել, որ փոխարէն՝ օրինակ՝ կաթնատնտեսութեամբ պարապելու, զարկ և կատարելագործում տալու, գիւղացին իր չուխով, արօրով, չանկռում է ցորենի մշակման համար անպէտք հողը, պահում մի քանի վատ կովեր՝ ստանալով նրանցից տարեկան 1/2 պ. իւղ, 1 պ. պանիր և գործադրելով խնամք ու 2—3 սայլ խոտ։

Եւ պարզ է, որ այսպիսի գիւղերի երիտասարդութեան 80—90%-ը դեգերում է տանի խորքերը, Անդրկասպեան երկրներն ու Ամերիկա՝ փող վաստակելու և ընտանիք պահելու…

Բնութիւնը պատժել գիտէ անողորմ կերպով՝ իր օրէնքներին հակառակ գնացողներին, և մեր այժմեան խեղճութիւնը ամենալաւ ապացոյցն է դրա։

Մեր գիւղացիութիւնը—այդ փաստ է—սիրում է բազմազան աշխատանք, որ եղած պարագաներում վնասաբեր է հանդիսանում, մի անգամ էլ յիշեցնելով առակների բաղի ու սագի պարծենկոտութիւնը։ Մշակված, համայնական, միահամուռ ույժերով առաջ տարվող ձեռնարկութիւններ չը կան մեր մէջ, իսկ անմշակ, անտեղի աշխատանքի և ձեռնարկութեան բազմազանութիւն՝ որքան կամենաք։

Եւ այս շատ է վնասում գործին։ Ահա ձեզ այդ տասնեակ տարիներով ժողովուրդը հիւծող գաղթի էական պատճառներից մէկը, թերևս ամենագլխաւորը։

Տեսնում ենք, ուրեմն, որ գիւղացիութիւնը չէ ճանաչում իր միջավայրը, բնութեան տուրքերը, բերքերի, արդիւնաբերութեան յորդ աղբիւրները և տգիտութեան ակնոցներով ի զուր խարխափում է գիւղում, ճգնում, տքնում, հիասթափվում և դիմում կորստաբեր գաղթին։

Այս է գլխաւոր ցաւը, ուշադրութեան և ամոքման արժանի։

Այս տեսակէտից գովելի է «Գիւղատնտեսի» եռանդը և խրախուսելի՝ ուղղութիւնը։

Պէտք և պահ է, որ կարող ույժերը ըստ ամենայնի ուսումնասիրեն մեր երկրի ամեն անկիւնները, տեղական պայմանները և գործի առաջնորդներ դառնան մեր խաւար գիւղացիութեան։

Աշխատանք, խաղաղ, կուլտուրական աշխատանք, որ կը բարձրացնէ մեր յետ ընկած և քայքայվող երկրի տնտեսական դրութիւնը։ Գործ։

Միայն բնութիւնը ճանաչելով, բերքերը շահագործելով՝ գիւղը կազատվի կորստաբեր ու քայքայիչ, այլասերման աղբիւր գաղթերից և գաղթիրից…

Մարդկութեան կենսաունակութեան ծառի արմատները գիւղացիութիւնն է, և թոյլ չը տանք, որ փտապակից չորանան այդ արմատները… Ա. Կոծինեան.

Դիլիջան

ԿԵԱՆՔԻ ՑԱՒԵՐԻՑ

IV

Զուարճութի՞ւն թէ՞ արբեցողութիւն

Մեր հասարակական կեանքը իր անկման շրջանումն է գտնվում. և եթէ այսպէս շարունակելու լինենք, պէտք է անպայման համոզվել, որ շուտով կեղտի ու ցեխի մէջ թաթախված՝ պառկելու ենք անդունդի յատակում։

Ժամանակը անկանգ սլանում է և իր իւրաքանչիւր քայլի հետ էվօլիւցիայի է ենթարկում կեանքը, մղելով, նրան դէպի լաւը, դէպի կատարելութիւնը և մարդիկ անպայմանօրէն ենթարկվելով այդ բնական էվօլիւցիային՝ աշխատում են բարեկարգել, կատարելագործել իրանց կեանքը, ընդգրկելով ընթացող ժամանակի հոսանքը։ Եւ մենք տեսնում ենք, որ կեանքը այլևս չընչին, մանր ցանկութիւններով լցված չէ և, որ գլխաւորն է, պատահականութեան դրոշմ չէ կրում, այլ առաջանում է տակտով, համաչափ և միշտ արդիւնաւէտ հետևանք է ունենում մարդու համար, զարգացնում, ընդլայնում է նրա հասկացողութիւնների հորիզոնը ու նրա մտաւորին սնունդ է տալիս։ Եւ որովհետև մարդը հասկացել է, որ առանց մտաւոր սնունդի նա շատ քիչ բա- [illegible] նասուններից, ուստի և նա աշխատում է իր ողջ ազատ ժամերը, իր զուարճութիւնները, քէֆերը այնպէս կազմակերպել, որ անմասն չը մնայ նաև ուղեղը։

Այդ այդպէս պիտի լինի և այդպէս է բոլոր կուլտուրական ազգերի մէջ, լինեն դրանք քաղաքացիներ թէ գիւղացիներ։

Բայց այդպէս է արդեօք մեզ մօտ, չը նայած որ մենք յաւակնութիւն ունենք մեզ կուլտուրական անուանելու և, որ գլխաւորն է, մեծ-մեծ խօսելու, առանց ըմբռնելու մեր ասած ֆրազների միտքը։

Ես ասացի՝ «չը նայած որ յաւակնութիւն ունենք մեզ կուլտուրական անուանելու», որովհետև մենք դեռ շատ հեռու ենք կուլտուրական ազգ կոչվելուց։

Բայց մեր կեանքի իրական օրինակները գալիս են պարզօրէն ապացուցելու, որ դժբաղդաբար այդպէս չէ։

Մենք մեր կեանքը ամբողջապէս հիմնում ենք պատահականութիւնների վրայ, առանց որևէ կարգ, կանոն, դիսցիպլինա մտցնելու նրանում։

Մենք երբէք չը գիտենք, թէ այսօրվայ մեր ազատ ժամը ինչի՞ ենք նուիրելու, այլ ասում ենք՝ տեսնենք ինչպէս կը լինի։ Եւ այդպիսի պատահականութիւնների վերածելով մեր կեանքը, ինչպէս ասում են, «ի զուր օդ ենք փչացնում», մինչև դադարում ենք ապրելուց։

Ի՞նչ է անում մեր բանւորը իր ազատ ժամերին. ոչինչ. և ոչինչ էլ անել չի կարող, որովհետև չը գիտէ, թէ ինչ անէ։ Դեռ այդ ոչինչ, գուցէ մենք կը մտածէինք, որ նա գնում է գոնէ տուն, հենց այնպէս պարապ ժամանակը՝ սպանում է մինչև միւս առաւօտ գործի գնալը։ Բայց ոչ, այդպէս չէ։ Կուլտուրական ազգի բանւորը միայն գործի ժամանակ է բանւոր, իսկ ազատ ժամերին նա էլ, որպէս միւս քաղաքացիները, մաքուր հագնված նստած է լինում ընթերցարաններում կամ յաճախում է թատրոն և այլ ուղեղին սնունդ տուող տեղեր։ Իսկ մեզանում նա գզգզված, պատառոտուն շորերով գինետան անկիւններումն է թաւալվում, աշխատած մի քանի սև գրօշները թողնում այնտեղ, մտնում է զանազան կասկածելի տեղեր, երբեմն փողոցներում գիշերում, քայքայում իր առողջութիւնը և թունաւորում թէ իր և թէ իր ընտանիքի, մատաղ զաւակների՝ առանց այն էլ չքաւորութիւնից թունաւորված կեանքը։

Այդ միևնոյն դրութեան մէջ է նաև մեր գիւղացիութիւնը, որի ազատ ժամանակները միայն տօն օրերն ու ձմեռն է (թէև եթէ ուզենայ՝ ձմեռն էլ ազատ չի մնայ. միթէ քիչ գործ կարելի է անել ձմեռը տանը)։ Եւ նա, որ կարող էր իր այդ ազատ ժամանակներին բարձրանալ, իր մտաւորին սնունդ տալով, խաւարի, տգիտութեան գրկից, աւելի ու աւելի խորն է թաղվում նրա մէջ, կարծես այդ տիղմն ու գարշահոտութիւնը աւելի գրաւիչ են նրա համար։

Ի՞նչ է անում գիւղացին տօներին ու ձմեռը. մտերմանում է գինու շշերին ու բաժակին. ուրիշ ոչինչ. ու ամբողջ օրերով մաքրազարդելով այդ հեղուկը, տաքացնելով գլուխը՝ արբում է ու այդ դրութեան մէջ խորտակում իր կեանքը, որովհետև զգաստանալուց յետոյ տեսնում է, որ փչացրել է թէ ունեցած փողը և թէ ժամանակը։ Բայց ուրախալի կը լինէր, եթէ մի անգամ զգալով՝ խրատվէր ու վերջ տար իր այդօրինակ կեանքին. ոչ. նա մի քանի օրից յետոյ նոյն դրութեան մէջ է։

Նա, ըստ իր ասելու, զուարճանում է։

Բայց միթէ նա չէ հասկանում, թէ ի՞նչ հետևանք ունի այդպիսի զուարճութիւնը, [illegible] եթէ ոչ միայն արբեցողութիւն։

Գիւղական թայֆայականութիւնները, ուրոնք արիւնալի հետքեր են թողնում, սպանութիւնները, ընտանեկան խռովութիւնները, բարոյականութեան ամենասարսափելի անկումը առաջանում են այդպիսի «զուարճութիւնից»։

Միթէ մենք զուարճանալու մասին այդպիսի թիւր կարծիք ունենք։

Նպատակ չունենք ասելու, որ գինու գործածութիւնը թողնենք, որը եթէ իրականանար, ի հարկէ շատ ցանկալի և ուրախալի կը լինէր. բայց գոնէ մտածենք, որ մեր աշխատանքի մեծ մասը ծախսելով այդ բանի վրա՝ ի՞նչ թշուառ դրութիւն ենք ստեղծում մեզ համար, երբեմն հացի փշրանքներից անգամ զրկվելով։

Իսկ այս ամենը առաջանում է մեր կեանքի անկանոնութիւնից, որին կանոնաւորելու համար կոչված են մեր բանիմաց անհատները, որոնք թէ խօսքով և թէ կենդանի օրինակով պէտք է աշխատեն այդ բանի համար։

Արշալոյս Տէր-Յովհաննեան

Ներքին-Ագուլիս

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՑԱՒԵՐԻՑ

Սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների ամբողջ ընթացքում, նաև մինչև նոյեմբերի վերջերը՝ շատ չարչարանքներ, տանջանքներ ու մեծ զրկանքներ կրելուց յետոյ միայն՝ ուսուցիչները պաշտօն են գտնում գաւառական գիւղերում։ Դրանք մասամբ նորաւարտներ են։

Գաւառական ուսուցիչները ստանձնելով պաշտօն՝ դիմում են օտարութեան, անծանօթ երկիր ու բնութիւն, անծանօթ կեանք ու վայր։ Ոտք դնելով գիւղը, նրանք գտնում են մեծ ընդունելութիւն գիւղացիներից, առաւել ևս հոգաբարձուներից։ Նրանց տեղ են տալիս եկեղեցուն կից, օդից զուրկ, մութ, խոնաւ, անմաքուր մի խուց՝ ասելով.

— Պարոն վարժապետ, այս ձեր քնակվելու օթախը (սենեակը) կը լինի, իսկ այս էլ ձեր ուսումնարանն է։

Իսկ «ուսումնարանը» բաղկանում է մէկ կամ երկու (երկրորդը շատ հազուագիւտ դէպքերում) փոքրիկ սենեակներից՝ ցած, մութ խոնաւ, հողէ յատակով, առաստաղը ցածր, պատուհանները փոքրիկ և թւով քիչ։

— Վառելափայտի և միւս ձեզ կարևոր պիտոյքների մասին չը մտածէք. դուք հանգստացէք ու անհոգ մնացէք. մենք ամեն ինչ իր ժամանակին կը հոգանք. ձերը այն լինի, պ. վարժապետ, որ մեր երեխաներին նամեն վիրեկնայ, գրել ու կարդալ սովորեցնէք։

Բայց, խեղճ ուսուցիչ, դու դեռ ևս չը հասկացար, որ քեզ հետ խօսողների այդ խօսքերը քամին տարաւ և դրանից յետոյ դու նրանց երեսին կարօտ կը մնաս ու դրանից յետոյ էլ նրանք բոլորովին ոտք չեն դնի դպրոցի շեմքին։ Դու գիտես ու քո սև օրը մի կերպ քարշ պէտք է տաս, անհամբեր մայիս ամսին սպասելով։

Քիչ յետոյ միայն իմանում ես, որ այդ մի քանի րոպէ առաջ հետդ խօսող մարդիկ, քեզ օթեան տուող ու անվերջ խոստումներ տուողները գիւղի ծխ. դպրոցի հոգաբարձական անդամներն են։

— Դէ՜, սիրելի վարժապետ, բաւական է ինչ որ հանգստացար. հանգստութիւնը մէկ-երկու օր կը լինի. դու գործով ես եկել այստեղ, գործդ սկսիր. առանց այն էլ պարապմունքները մեզանում ուշացել են, որովհետև մեղաւորը մենք ենք, ուսուցչին ուշ ենք հրաւիրել. բայց մանուկները դպրոցի բազմանի րոպէ առ րոպէ սպասում են։

Նորեկ վարժապետը, աշակերտների ընդունելութիւնը վերջացնելուց յետոյ, առաւօտը շատ կանուխ արթնանալով սկսում է պարապմունքները. բայց ինչ. վառելափայտ չը կայ, դասարանը սաստիկ ցուրտ է, գիւղացի մերկ, պատառոտված ցնցոտիներում փաթաթված երեխաները, գոյներն գցած, սիրթնած դողում են։ Եթէ վառարանը մի կերպ վառում ես, ծխում է, առանց այն էլ մութ ու խոնաւ է, պարապելը բոլորովին անկարելի է։ Փորձիր այդ մասին յայտնել Նորածանօթ հոգաբարձութեանը, որ փայտ չը կայ և դասարանի սենեակը իր նպատակին չէ ծառայում. քո բոլոր դիմումները ապարդիւն կանցնեն. լսող, դպրոցի բակը մտող չի լինի. թէկուզ օրական 10—20 նամակ, նոյնքան էլ աշակերտ ուղարկես, բոլորը ի զուր կանցնեն. միշտ նոյն անմոռանալի ու ընդունված խօսքերը կը լսես նրանց բերանից։

— Վարժապետ, լաւ ես ասում, համբերիր, ու ամեն բան լաւ կը լինի. կը բերենք, կը տանք…

Յետոյ էլ չէ՞ որ ուսուցիչը փողի կարիք ունի, նա ուտել, հագնել ու ապրել է ուզում. նա եկել է ապրելու, փող վաստակելու և ոչ թէ սովամահ լինելու համար։ Նա խնդրում է իր ռոճիկը, իր դառն քրտինքի գինը վճարել. բայց ծով է լուղը։ Այսօր էգուց անելով խաբում են ու տարին անց կացնում։

Ահա գաւառի ուսուցիչների ներկայ ու ապագայ պատկերը, որը իմ կաշւիս վրա փորձելով՝ դնում եմ հասարակութեան առաջ, կրկնելով որ դեռ էլի վատթար վիճակի մէջ կը մնայ հայ ուսուցչութիւնը, եթէ նրա ապահովութեան և կեանքի բարելաւման համար չը մտածեն ու նրա վիճակը մի կերպ չը թեթևացնեն եթէ ոչ ամբողջապէս, գոնէ մասամբ, որովհետև այդ նոյն հայ ուսուցչութիւնը վաղուց ի վեր և այժմս էլ խաղալիք է դարձել հոգաբարձութիւնների ձեռքին և նրանց ամեն մի թեթև շարժումին։

Կայծոն Շըեղեան

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայկական խաւարչտին հորիզոնից Գր. Խալաթեանն էլ անհետացաւ. նա՝ որ իր բովանդակ կեանքը նուիրել էր հայ գրականութեան ու պատմութեան ուսումնասիրութեան, որ հետախուզելով մեր պատմութիւնը, քննական բովից անցկացնելով ազգային հին յիշատակարանները, միաժամանակ ծանօթացնում էր ռուս ժողովրդին հայ գրականութեան և պատմութեան հետ։

1902 թ. աշնան է եղել իմ ծանօթութիւնը հանգուցեալի հետ, երբ ես Լազարեան ճեմարանի լիցէօնում ի միջի այլոց լսում էի նաև հայոց գրականութիւն. իմ առաջին տպաւորութիւնն այն էր, որ ես գործ ունէի մի պարզ ու համակրելի անձի հետ. երկար տարիների կեանքը հեռախուսում, հայ կեանքից ու շրջաններից հեռու և տեսչական պաշտօնը Լազարեան ճեմարանում՝ անկարող էին եղել իրանց դրոշմը թողնել յարգելի ուսուցչապետի վրա. նա հայ էր հոգով, իր ձգտումներով, ողջ էութեամբ, հետաքրքրվում էր հայ կեանքով, գրականութեամբ, մեր ազգային հիմնարկութիւնների առաջխաղացութեամբ, և ցաւում հոգով—սրտով, երբ որևէ չարիք կամ տառապանք նորից չոքում էր հայ ժողովրդի դռանը։ Խալաթեանի այդ հայկական ոգին աննկատելի չէր մնացել նրա թշնամիների կողմից. չը նայելով, որ նա իր պաշտօնավարութեան ընթացքում Լազարեան ճեմարանում պահում էր իրան չափազանց կոռեկտ, այնուամենայնիւ օգտվեցին նրա բնաւորութեան այդ գծից ու Գր. Խալաթեանին հեռացրին ճեմարանի տեսչութեան պաշտօնից, որպէս հայկական սեպարատիստական ոգի տարածողի։

Պէտք է չուրանալ, որ նա իր տեսչութեան ժամանակ Լազարեան ճեմարանում կարողացել էր որոշ դիրք ստեղծել, դպրոցը աչքի էր ընկնում իր կարգապահութեամբ, աշակերտութիւնն էլ յարգում էր իր տեսչին։ Ճեմարանից հեռացնելը բնականաբար ծանր տպաւորութիւն գործեց նրա վրա, և նա առժամանակ համարեա թէ հեռացաւ Մօսկվայի գաղութի հասարակական կեանքից։ Այնուհետև մենք հանդիպում էինք մասնաւոր շրջաններում, մանաւանդ, որ ես այդ ժամանակ ձեռք զարկեցի նրա «Армянскіе Аршакиды» խոշոր քննադատական երկից մի շարք գլուխներ թարգմանել «Հանդէս Ամսօրեայի» խմբագրութեան համար. երկար ժամեր էին տեւում մեր խօ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջերս՝ յայտնի մասնագէտ-գիտնականներ երբեմն-երբեմն հարկաւոր են համարում ընդհանուր մամուլի մէջ տալ հակիրճ տեղեկութիւններ նշանաւոր գիւտերի մասին՝ վերաբերեալ զանազան գիտութիւններին, ի միջի այլոց և բժշկականութեան։ Հռչակաւոր գիտնական Մեչնիկօվը հետևում է այդ գեղեցիկ օրինակին, և ահա նա տպել է «Рус. Вѣд.» նոր տարվայ համարում շատ հետաքրքրական տեղեկութիւններ *)։ Նոյն մտքով տպված է և ներկայ տարվայ «Нов. Время»-ի առաջին համարում մի յօդուած **)։ Մենք յոյժ կարևոր ենք համարում հայ լրագրութեան հետևող հասարակութեան ծանօթացնել թէ վերոյիշեալ գրութիւնների բովանդակութեան հետ և թէ նորերս շատ մեծ հետաքրքրութիւն շարժող Վասսերմանի հետազօտութեան հետ, որը վերաբերում է քաղցկեղի բժշկութեան, որը տպված է մասնագիտական բժշկական թերթում, որի անունը նշանակված է յօդուածիս վերջում։ Հռչակաւոր Մեչնիկօվը նախ և առաջ խօսում է սիֆիլիսի մասին, «որը 400 տարուց աւելի է, որ մուտք է գործել Եւրոպա, ուր նա ամեն տեղ տիրապետում է կատաղաբար»։ Ոչ միայն Եւրոպայում, այլ և ամեն տեղ երկրագնդի վրա։ Սիֆիլիսի բժշկութեան մէջ ամենամեծ ուշադրութեան արժանացաւ հռչակաւոր Էրլիխի «606»-ը, որ կոչվում է «Սալվարսան»։ Վերջինի գործադրութիւնը լայն կերպով տեղի է ունենում ամեն տեղ. նա յարուցել է թէ օպտիմիստական և թէ պեսսիմիստական հայեացքներ այդ գիւտի մասին. կան բժիշկներ, որոնք թերահաւատութեամբ են վերաբերվում այդ գիւտին, մանաւանդ Ֆրանսիայում։ Բայց նոյն իսկ Գերմանիայում այժմս կան բազմաթիւ յայտնի սիֆիլիսագէտներ, ինչպէս գրում է բժիշկ Բէլով *), որոնք առաջվայ յափշտակութիւնից հիասթափվել են և այժմ դառնում են նախկին բուժական հակասիֆիլիտական միջոցներին՝ սնդիկին և եօդին, չը հերքելով «salvarsan»-ը իբրև օժանդակիչ միջոց, ոչ արմատական։

Բայց և այնպէս ապացուցված է բազմաթիւ բժիշկների փորձերով, որ եղել են շատ դէպքեր հին և չարաբնոյթ ունեցող սիֆիլիտների, որոնց՝ մինչև սալվարսանի գիւտը՝ եղած միջոցներով անհնարին է եղել բժշկել և միայն 606-ից է ստացվել հրաշագործ ազդեցութիւն։ Նոյնպէս և միւս ձևերի սիֆիլիսի ժամանակ յիշեալ միջոցի բուժիչ գործողութիւնը անհերքելի է։ Ճշմարիտ է, եղել են դէպքեր, երբ այդ միջոցը միանգամայն չէ բուժել և երևացել են կրկնումներ և մինչև իսկ մահվան դէպքեր։ Ահա ինչու բժ. Հէնրիխը Կիլում ստացել է լաւ հետևանքներ՝ գործադրելով սալվարսանի հետ և մեծ չափի կալօմել։ Գալով այդ միջոցի վտանգաւորութեան մասին, պէտք է ասած, որ երբեմն նրանից պատահում են անախորժ երևոյթներ, թունաւորումներ և անգամ մահ։

Էրլիխի կարծիքով՝ վտանգը կեանքի համար սալվարսանից՝ աւելի քիչ է, քան խլորոֆորմից։ Այնու ամենայնիւ պէտք է զգուշաբար գործադրել սալվարսանը այն անձանց վրա, որոնց ջղային սիստեմը թուլացած է և որոնց սիրտը և անօթները առողջ չեն։

Բացի սալվարսանից՝ այժմս փորձեր են անում պատրաստելու հակա-սիֆիլիտիկական շիճուկ-պատուաստ, թէև առայժմ անյաջող։ Ներկայ տարում Ճապօնացի բժիշկ Նագուչին Նիւ-Եօրկում Րօկֆելլերի ինստիտուտում սիֆիլիսի մակաբոյծ-սպիրօխէտի կուլտուրան աճեցնում է արհեստական սննդաբար միջավայրի մէջ, որը երկար փորձերից յետոյ աջողվել է։ Բայց ապացուցվել է, որ միացած սպիրօխէտները նախապաշտպանողական գործողութիւն չունեն։ Վերջինը պահանջում է կենդանի սպիրօխէտներ։

Իսկ վերջինը գործադրելով կարելի է սպասել վտանգ՝ ստանալ մի որևիցէ վտանգաւոր հիւանդութիւն։ Բարեբաղդաբար գտնված են ուրիշ միջոցներ, որոնցից է օրինակ նախապաշտպանողական օծանելիքը, որը գործ են ածում կասկածաւոր շփումից յետոյ, իսկոյն։ Հռչակաւոր գերմանացի վեներագէտ Հէյսեր մանաւանդ խորհուրդ է տալիս այն օծանելիքի գործածութիւնը, որի մէջ մտնում է սուլեմա։

Նրա փորձերը կապիկների վրա այնքան էլ նպատակայարմար չեղան։ Այդ կողմից աւելի աջող է դրական օծանելիքը, որը պատրաստվում է հետևեալ ձևով. 33 մաս կալոմել, 10 մաս վազելին և 57 մաս մաքուր լանոլին. և փորձը այդ մազից միշտ աջող է եղել։ Յայտնի վեներօլոգ Հօֆմանը յանձնարարում է հաւասար քանակութեան կալօմելի, վազելինի և լանօլինի բաղադրութեան գործածումը։ Հետևանքը մարդկանց վրա աջող է, բայց շատ կապիկների վրա դեռ ոչ այնքան։

Վեներական հիւանդութիւնների դէմ յոյժ կարևոր է մաքրասիրութիւնը և գիտակցութիւն յիշեալ հիւանդութեան վտանգաւորութեան։

Վասսերմանի ռէակցիան սիֆիլիսի որոշման համար համոզել է, որ այդ հիւանդութիւնը կարծվածից աւելի է տարածված։

Բազմաթիւ հիւանդութիւնները սրտի և անօթների, ջղային շատ հիւանդութիւնները, աչքի և շատ տարածված դէպքերը անդամալուծութեան և խելագարութեան՝ զարգանում են սիֆիլիտիկական հողի վրա։

Սալվարսանը՝ բացի սիֆիլիսից՝ գործադրվում է և ուրիշ հիւանդութիւնների դէմ, օրինակ՝ տրօպիկական մէկ հիւանդութեան դէմ, որը կոչվում է «Մալինեան հիւանդութիւն»։

Նա շատ նման է սիֆիլիսին և շատ վարակիչ ու տարածվում է ամբողջ ազգաբնակութեան վրա յայտնի վայրերում՝ երեխայից մօտ գլխաւորապէս։ Հոլլանդական Գվինէայում այնքան տարածված էր այդ հիւանդութիւնը, որ հնար չը կար նրան յաղթահարել։ Բայց սալվարսանը շատ բուժաբար դարձաւ նրա դէմ։ Սուրինամում բացվեց յատուկ հիւանդանոց, ուր հաւաքում էին յիշեալ հիւանդութեամբ բոլոր հիւանդներին և բոլորին սրսկում էին սալվարսան։ Երկու շաբաթից յետոյ բոլոր հիւանդները՝ թւով 328 հոգի՝ բժշկվեցին սալվարսանով, և հիւանդանոցը փակվեց։ Այդ հիւանդութիւնը պատահում է և Բրազիլիայում, ուր կոչվում է բուբա, Կոնգօյում, ուր կոչվում պիան։ Երրորդ հիւանդութիւնը՝ այդ յետադարձ տիֆն է, որի դէմ սովորաբար մէկ սրսկումը սալվարսանի՝ բաւական է բժշկելու համար։ Որովհետև այդ հիւանդութիւնը տարածվում է գլխաւորապէս ոջիլների միջոցով, որոնց ոչնչացումը անհրաժեշտ է, մանաւանդ որ նրանք աւելի վտանգաւոր բծաւոր տիֆը ևս տարածող են։ Թունիսում բժ. Գօրբրան հանքային գործարաններում ծագած բծաւոր տիֆի դէմ՝ ոջիլների ոչնչացմամբ՝ վերջ տուեց այդ հիւանդութեան։ Զարմանալի է, որ Ռուսաստանում, ուր բծաւոր և յետադարձ տիֆերը այնքան տարածված են, չեն աշխատում ազատվել ոջիլներից, այդ վտանգաւոր միջատներից, ինչպէս բացատրվեց վերև։ Յայտնի գիտնականին անշուշտ յայտնի չէ, որ ռուս ազգաբնակութիւնը աւելի մաքրասէր լինելով, սովոր բաղանիքների գործադրութեան՝ շատ սակաւ է տուժում ոջիլներից, քան Կովկասի ազգաբնակութիւնը՝ վրացի, հայ և թուրք, որոնք շատ համբերատար և հիւրասէր են դէպի ոջիլը։

Որովայնատիֆը նոյնպէս ուսումնասիրութեան առարկայ է դարձել։ Մեչնիկօվ և Բէզրեդկօ փորձել են նախապաշտպանիչ շիճուկ, բայց առայժմ անյաջող։ Վերջինը փորձել է կապիկների վրա կենդանի բակտերիաներ, թափանցված յիշեալ կենդանիների արեան շիճուկով։ Փորձը շիմպանզէի վրա աջող հետևանք ցոյց տուեց. բայց դեռ չէ գործադրվում այդ միջոցը մարդկանց վրա։ Առայժմ սրսկում են մարդկանց սակցութիւնը հայ պատմական անցեալի մասին: Այդ օրերին նա մտադրութիւն ունէր Գէորգեան ճեմարանի մի քանի սաների աջակցութեամբ կազմել հայոց պատմութիւն զուտ գիտական բնաւորութեամբ և մեր քննական բանասիրութեան վրա հիմնված. վերջ ի վերջոյ նա միայնակ գլուխ բերեց այդ խոշոր ուսումնասիրութիւնը մեր պատմական անցեալի մասին: Այդ գրուածքի մի մասը անցեալ տարի լոյս տեսաւ Լազարեան ճեմարանի ուսուցիչների համար, որը մեր մամուլի և գիտնականների կողմից ընդունվեց համակրանքով և որի առաջաբանը թարգմանեց «Արօրը» Ստ. Մալխասեանցը: Հայոց պատմութեան իսկականը պատրաստվում էր տպագրել պատկերներով, թէ հայերէն և թէ ռուսերէն, սակայն անագորոյն մահը անժամանակ կտրելով նրա կեանքի թելը՝ զրկեց հայ ժողովրդին այդ խոշոր գործից. խոշոր եմ անուանում, քանի որ ազգային դպրոցներում կանոնաւոր հայոց պատմութեան դասագրքի չափազանց մեծ կարիքը վաղուց է զգացվում:

---

*) „Краткій отчетъ объ успѣхахъ науки въ борьбѣ противъ инфекц. болѣзней за 1911 г.“ „Рус. Вѣд.“ № 1, 1912 г.

**) „Медицина“, „Нов. Время“, № 1, 1912.

*) Бѣловъ. Итоги 1½ годов. изученія сальварсана въ связи съ идеею Эрлиха о terapia magna sterilisans. „Русскій Врачъ“ № 50, 1911 г.

Վերջին անգամ Դր. Խալաթեանին տեսայ իր բնակարանում 25-ամեայ յոբելեանի օրը, համարեա թէ միայնակ էր, մօտը երկու ուսանող կային իր նախկին աշակերտներից. խօսք բացվեց գրական նոր երևոյթների, կաթողիկոսական խնդրի մասին. նա խօսում էր երիտասարդին յատուկ աշխոյժով: Սակայն մի ծանր նախազգացում, մի ճակատագրական դժկամակութիւն այդ օրը մղձաւանջի պէս խեղդում էր նրան, ծայրայեղ յուսահատութեան մէջ էր գտնվում... «Ի՞նչ 25-ամեակ, մի՛ շնորհաւորէք խնդրեմ, ինձ թւում է, թէ մարդ յոբելեանից յետոյ [illegible] գերեզման է դիմում»...

Մենք հեռացանք տխուր տպաւորութեան տակ. հիւանդութիւնը թեթև էր, սովորական շնչափողի բորբոքումն, բայց մեզ եւ սև մտորումները պատեցին... Յարգելի ուսուցչապետն անկարող եղաւ ապաքինվել. հիւանդութիւնը փոխվեց պլեվրիտի, ապա սրտի սաստիկ թուլութիւն և երակների կարծրացումն: Բժիշկների խորհրդով նրան տեղափոխեցին դէպի հարաւ—Թիֆլիս, իսկ քանի մի օրից հեռագիրը գուժեց, որ նրա սիրտը դադարել է բաբախելուց... Մահը կտրել է նրա կեանքի թելն այն ժամանակ՝ երբ նրա մտաւոր կարողութիւններն իրանց բեղուն շրջանումն էին և կարող էին հայ բանասիրութեանը նորանոր ուսումնասիրութիւններ տալ. երբ հայ գրականութիւնը դեռ նրանից սպասելիքներ ունէր: Սա-Ջէն

Մոսկվա, 17 փետր.

ԳԱՒԱՌԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Նոր-Բայազէտ, 13 փետրվարի

Գաւառական ժողովրդի նիւթական և տնտեսական դրութիւնը շատ անմխիթար պատկեր է ներկայացնում: Մի կողմից հացի և կենսական մթերքների թանգութիւնը, միւս կողմից տաւարի ժանտախտի ուրուականը, հարկերի խստութեամբ գանձվելը, դրամական և ֆինանսական տագնապը, պարտքերի աճումը և այլ սրանց նման ընտանեկան հանգամանքներ՝ մեր գաւառի ազգաբնակութիւնը նեղութեան մէջ են դցել և գլխովին չքաւորութեան դուռը հասցրել:

Անտանելի է գաւառի ժողովրդի դրութիւնը, դժնդակ՝ նրա կացութիւնը:

Մտէք որ գիւղն ուզում էք և դուք կը տեսնէք, բացի մի փոքր դասակարգից կամ մի քանի ընտանիքներից, որոնք վաշխառուի դերն ունեն իրանց շրջաններում կամ թէ ժողովրդի արիւնը ծծող վամպիրներն են, միւս բոլոր դասակարգերը ճնշված են առօրեայ ընտանեկան հոգսերով և անտանելի կացութեամբ... Մի կացութիւն, մի ապրուստ, որը ոչ մի կողմից հաճելի պայմաններ չէ ներկայացնում գաւառական ժողովրդի համար:

Այդպիսով ահա կարելի է ուղղակի յայտնել, որ մեր գաւառացիք հօ իսկապէս չեն ապրում կամ ապրելու մտքով հօ չեն ուտում-խմում, հագնում կամ վայելչութիւն անում, ինչպէս օրինակ քաղաքներում,— ոչ, քաւ լիցի,—այլ նրանք խաբում են իրանց ընտանիքը, իրանց ստամոքսը... Նրանց կեանքը, ասում եմ, հօ կեանք չէ, այլ մարդու իսկական կեանքի մի հեղհեղուկ պատճէնը, նրա պրօֆանացիան, նրա կարրիկատուրան... Թէպէտ մարդիկ (ի հարկէ գաւառի զրկված մարդիկ) ապրում են, կեանք ունեն, բայց վա՜յ այդ կեանքին, վա՜յ այդ հալին, որի մէջ գտնվում են մեր գիւղականները:

Պէտք է տեսնել, թէ ինչպէս են ապրում նրանք: Մէկը, տեսնում էք, հաց չունի, միւսը չորի ու հագուստի է կարօտ, երրորդի լծկանն է պակասում, չորրորդը կթան չունի, հինգերորդին պարտատէրերն են խեղդում և ունեցած-չունեցածը աճուրդի հանում, վեցերորդի տան բրեղէններն են հարկի տեղ գրաւվում, եօթներորդի անասունների կերն է սպառվել, ոչ փող ունի և ոչ գին, և այդպէս բոլորը, բոլորը ընկած են «քեասիբ» դրութեան մէջ...

Մի խօսքով՝ այս տարի մեր ժողովրդի կացութիւնը այն աստիճան անմխիթար է և քայքայված, որ շատերը «էրնէկ» են տալիս անցեալ տարիներին՝ դժբաղդութեան համարված աւելի մեծ ժամանակաշրջաններին: Եւ չը նայելով որ այս տարի ընդհանրապէս մեր գաւառում հողային արդիւնաբերութիւնը բաւարար դրութեան մէջ է նկատվել, բայց և այնպէս վերև թւած դժնդակ պայմանների պատճառով ժողովուրդը դժգոհ է այս տարվայ կեանքի և ապրուստի վերաբերմամբ, որովհետև վերջին մի շարք տարիների բնական զանազան ձախորդութիւններ նրան չքաւորութեան մէջ են թաղել:

Այո, մի շարք ձախորդութիւններ իրանց անողորմ արհաւիրքներով այն աստիճան քայքայեցին մեր գաւառի ազգաբնակութեան, որ նա, չուարած, կարօտ է երկար ժամանակի, զօրեղ միջոցների և հողագործական զգալի արդիւնաբերութեան, որպէսզի կարողանայ մի կերպ դրտել իր քայքայված տնտեսութիւնը և կարգի բերել իր աննորմալ դրութիւնը, որը ոչինչ բանի չէ նմանում: Գ. Սիւնանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Փետրվարի 22-ին կայացաւ քաղաքային վարչութեան և համալսարանական մասնախմբի միացեալ նիստը, որը որոշեց հրաւիրել նաև Թիֆլիսի գաւառի ազնուականութեան պարագլուխ իշխ. Գ. Թումանովին, Ա.-Մ.-Բէկ Թիփօլի-Բօլովին և Ալ. Բալանթարին, նաև Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքների ներկայացուցչին մասնակցելու մասնախմբի նիստերին: Ապա մասնախմբի նախագահ իշխ. Գ. Թումանեան ժողովականներին ծանօթացրեց համալսարանի գործերի դրութեան հետ, իսկ քաղաքագլուխը խօսեց համալսարանի բացման հարցի դրութեան մասին կառավարչական բարձր շրջաններում:

◆ Կովկասի Փոխարքան թոյլատրել է ներկայ տարվայ ընթացքում գումարել Կովկասի բամբակագործների համագումար:

◆ Մոսկվայից մեզ հաղորդում են, որ Լազարեան ճեմարանի վարչութիւնը մտադրութիւն ունի հանգանակութիւն բանալ պրոֆ. Դր. Խալաթեանի անուան ճեմարանում թոշակաւոր պահելու համար:

◆ Այսօր և վաղը Արքունական թատրոնում Ա. Լիսօվսկի կը կարդայ երկու դասախօսութիւն: Առաջին դասախօսութիւնը, որ տեղի կունենայ այսօր, ունի հետևեալ հետաքրքրական թեման՝ «Ազգայնութիւնը և ազգայնականութիւնը»:

◆ Կովկասի Փոխարքային ամսիս 23 ին ներկայացաւ Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսեանը:

◆ Թիֆլիսի ուղղափառ սեմինարիայում տեղի ունեցած աշակերտական ցոյցերի նկատմամբ «Баку» լրագրի 43-րդ համարում կարդում ենք հետևեալը. «Մի քանի օր սրանից առաջ Թիֆլիսի ուղղափառ հոգևոր սեմինարիայից արձակվեցին մօտ 20 աշակերտներ, զանազան յանցանքների համար: Փետրվարի 22-ին առաւօտեան 3-րդ դասարանի վրացի աշակերտները դասադուլ յայտարարեցին: Ռուս և յոյն աշակերտները չը միացան նրանց: Դասադուլ անողները պահանջում էին արձակված աշակերտների յետ ընդունումը և ճնշում էին գործ դնում ստորին դասարանների աշակերտների վրա: Հրաւիրվեցին նահանգապետն ու ոստիկանապետը և ոստիկանութիւնը: Աշակերտներին առաջարկվեց, եթէ չեն կամենում պարապել, հեռանալ սեմինարիայից: Բոլորն էլ համաձայնեցին պարապել: 14 աշակերտներ ձերբակալված են»:

◆ Այսօր, երեկոյեան 8 ժամին, հասարակական ակումբում (Բօրսայի դահլիճ) մանկավարժ Տ. Մարգարեանը կը կարդայ մի ռեֆերատ՝ «Աշխատանքի ընդունակութիւն, յոգնածութիւն և նրանց հետևանքները դպրոցներում»: Ռեֆերատից յետոյ տեղի կունենայ մտքերի փոխանակութիւն և գրական երաժշտական բաժին:

◆ Դատաստանական քննիչի կարգադրութեամբ բանտարկված է խոշոր առևտրական Բերկովիչը, որը պատասխանատւութեան է ենթարկվում իր թէյի պահեստը դիտմամբ հրդեհելու գործով:

◆ Թիֆլիսի հացթուխները կրկին մի խնդրով դիմեցին քաղաքային վարչութեան, խնդրելով աւելացնել հացի սակագինը, որովհետև ներկայ սակագնով հաց վաճառելը նրանց վնաս է հասցնում:

◆ Թիֆլիսի դումայական վերստուգիչ մասնաժողովը իր վերջընթեր նիստում որոշել է թոյլ չը տալ ներկայ գտնվելու մասնաժողովի նիստերին մամուլի ներկայացուցիչներին, չը նայած որ 1903 թւին որոշված է եղել թոյլ տալու լրագրողներին ներկայ գտնվել քաղաքային վարչութեան և բոլոր մասնաժողովների նիստերին:

◆ Կովկասեան Բժշկական Ընկերութիւնը կազմակերպում է ժողովրդական հետևեալ ընթերցանութիւնները: Երեխաների համար.—շաբաթ, փետրվարի 25-ին տ. Ակիմակինա, ռուսերէն լեզուով, երեկոյեան 4—5 ժամը կը կարդայ «Մանր յանցանք» գրուածքը. կիրակի, փետրվարի 26-ին Ալիխանեան, հայոց լեզուով, առաւօտեան 9½-ից մինչև 11 ժամը կը կարդայ ցուրտ երկիրների մասին. Ա. Գօնիեվա վրաց լեզուով, ցերեկվայ 11—12 ժամը կը կարդայ «Եղիտօ և գող» ու «Թովմասի արարմունքները» գրուածքները: Չափահասների համար.—բժ. Ֆլօրինա ռուսաց լեզուով, երրորդ հանրամատչելի դասախօսութիւն վարակիչ հիւանդութիւնների մասին: Ընթերցանութիւնների ժամանակ ցոյց կը տրվեն լուսապատկերներ:

◆ Կովկասի Փոխարքան թոյլ տուեց կովկասեան հայ բեմերի վրա ներկայացնել Գ. Սունդուկեանի «Կտակ» 4 գործ. հայերէն պիեսը:

◆ Երկաթուղիների արհեստանոցի բանուոր Վասիլի Սխիրտլաձէն յայտնեց ոստիկանութեանը, որ իր որդի Գէորգին, 16 տար., իր բացակայութեան ժամանակ գողացել է 12 րուբլի դրամ, արծաթէ ժամացոյց և ոսկէ մէդալիօն, որից յետոյ անհետացել է: Խուզարկու ոստիկանութիւնը նրան ձերբակալեց Բաթումում և բերեց Թիֆլիս: Յանցագործը խոստովանեց իր յանցանքը:

◆ Փետրվարի 23-ին 12-րդ քաղաքամասի ոստիկանապետը տեղեկացաւ, որ առևտրական Գէորգի Տրիֆոնօվը պահում է ատրճանակներ առանց պատշաճաւոր թոյլտւութեան: Ոստիկանութիւնը ատրճանակները երևան հանեց այլևայլ անձերի մօտ: Նրանցից Յարութիւնեանը և Տրիֆոնօվը պատասխանատւութեան են ենթարկվում:

◆ Թիֆլիսի յոյների բարեգործական ընկերութեան վարչութեան նիստին նախագահ ընտրված է Խ. Սինգարեվա, փոխնախագահ Խ. Բաստիանօվ, քարտուղար Ն. Կուցուբօվ և գանձապահ Կ. Նալպանիս:

◆ Բիբի-Հէյբաթում 4 չարագործներ յարձակում գործեցին դրամատան վրա և վիրաւորելով դրամատան թէկնապահին, յափշտակեցին 500 րուբլի ու անհետացան:

◆ Բագւում տեղի է ունեցել մահմեդական բարեգործական «Սադեթ» ընկերութեան սեփական շէնքի հիմնարկէքը, ներկայութեամբ իշխանութեան ներկայացուցիչների և հասարակութեան:

◆ Բագւում լոյս տեսնող երգիծաբանական «Զիգիտ» թերթի խմբագիր Ղորղանեանը պատասխանատւութեան է ենթարկվում սրբապղծութեան համար:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դրամա

Գօրդինի պիեսները միշտ կը կապեն իսկական գեղարուեստական բաւականութիւն ստանալու հետամուտ հասարակութեանը թատրոնի հետ: Որովհետև կեանքի հայելին պատկերանում է նրանցով:

Դեռ թարմ են «Միրրա Էֆրօսի», «Սատանայի», «Ցիմարի» տպաւորութիւնները տեսողների մտքում, և ահա՛ մի ռէալիստական-գեղարուեստական հոյակապ կերտուածք եւ կեանքի արդի ժամանակաշրջանից՝ «Ովկիանոսից այն կողմը», որ տաղանդաւոր հրեայ թատերագրի նախամահվան արգասիքն է:

Կանգ առնել մանրամասն այդ պիէսի վրա կարիք չենք զգում, քանի որ նա խաղացվեց հայերէն, և դեռ մի քանի օր առաջ ռեցենզիա էլ տպվեց «Մշակում», երբ այդ պիէսը խաղաց Արտիստական թատրոնում Բարատովի դրամատիկ. խումբը:

Մենք ներկայ եղանք փետր. 23-ին յիշեալ պիէսի կրկնութեանը նոյն խմբի խաղի ժամանակ:

Եւ տեսանք մեր վերև յիշված խօսքերի արդարացումը նրանում, որ պիէսը մէկ անգամ տեսնողը դարձեալ շտապել էր մի աւելորդ անգամ ապրել բնական տիպերի գործողութեան ժամերում. իսկ որ գլխաւորն է, բացի առանձին անձանց բնորոշութիւնից, տեսնել Գօրդինի վարպետ գրչին ենթարկված անհատների հոգեկան իսկական պատկերը, մարդու հոգեկան աշխարհի հարազատ արտայայտութիւնը...

Խումբը խաղաց օրինակելի կերպով: Դերերը բաժանված էին ըստ ոյժերի, և ընդհանուր տպաւորութիւնը՝ թատրոնը լցրած բազմութեան կողմից՝ մի պլիւս ևս աւելացրեց Բարատովի խմբի հաշւի վրա:

Ըստ սովորականի իրանց մտածված ու համաչափ խաղով առանձնապէս աչքի ընկան Բօրիսօվը, տ. տ. Սարանչօվա, Բուլկօվսկայա, Կօլօբօվա և այլն:

Երէկ երեկոյեան սովորական աջողութեամբ երրորդ անգամ խաղացվեց Օստրօվսկու «Ոսկեայ վանդակ» պիէսը: Ե.

Օպերետ

Հինգշաբթի, փետրվ. 23-ին Արքունական թատրոնում տեղի ունեցաւ օպերետային խմբի նախավերջին ներկայացումը: Խաղացվեց «Добродѣтельная грѣшница» օպերետը, որը սովորաբար դրվում է բեմերի վրա և ծանօթ է հասարակութեանը «Муленъ Ружъ» կամ «Добродѣтельная Сюзанна» անունով:

Օպերետն ընդհանրապէս անցաւ թոյլ, որ անսպասելի էր այդօրինակ լաւ կազմակերպված խմբի կողմից: Շուվալօվա այդ երեկոյեան չէր մասնակցում: Պէտք է խոստովանել, որ այդ նոյն օպերետը Արտիստական թատրոնում Պօլտավցևի խումբը խաղաց աւելի աջող և էֆեկտով:

Երէկ երեկոյեան կայացաւ խմբի վերջին՝ հրաժեշտի ներկայացումը: Ռէժիսեօր և շնորհալի կոմիկ Կօշէվսկին այդ երեկոյ իր բենեֆիսին դրել էր Լեհարի «Веселая вдова» օպերետը: Հարուստ այրի կնոջ դերում հանդէս եկաւ տաղանդաւոր երգչուհի Շուվալօվա և իր գեղեցիկ երգով, պարերով և խաղով վաստակեց ջերմ ծափահարութիւններ և ստացաւ ծաղկեփնջեր:

Կօշէվսկին նոյնպէս ստացաւ ծաղկեփնջեր և արժանացաւ ներկայ հասարակութեան կողմից համակրական ծափերի:

Թատրոնը լի էր հասարակութեամբ: X.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

А. Дагбашянъ. „Курсъ русскаго языка для армянскихъ школъ", выпускъ I, գինն է 25 կ., выпускъ II, գինն է 40 կ., Թիֆլիս, 1911 թ.

Տասը տարի առաջ Կովկասում վիճելի հարց ծագեց, թէ ինչպէս աւանդել ռուսաց լեզու տեղացի երեխաներին—մայրենի լեզուի օգնութեամբ թէ առանց նրան: Հանդէս եկաւ Լևիտսկի, յօրինեց ռուսաց լեզուի դասագրքերը տեղացի երեխաների համար և իշխանութիւնն էլ պարտաւորեցրեց այդ դասագրքերը գործածել ուսումնարաններում: Ժխտելով մայրենի լեզուի նշանակութիւնը օտար լեզուի ուսման ժամանակ, Լևիտսկին պահանջում էր, որ ռուսերէնը տեղացի երեխաները սովորեն բացառապէս ռուս լեզուով, համարելով այդ մեթօդը «բնական», ինչպէս ֆրանսիացիները վարվեցին Ալժիրում:

Լևիտսկին ունեցաւ և կողմնակիցներ, և հակառակորդներ: Նրա պաշտպաններն էին գլխաւորապէս ժողովրդական դպրոցների տեսուչներ, որոնք ամեն տեղ փորձնական դասեր կազմելով՝ կամենում էին Լևիտսկու մեթօդը գործադրել դպրոցներում: Շատ ուսուցիչներ հետևեցին, եղան հակառակորդներ էլ:

Լևիտսկուն հակառակորդ դուրս եկաւ յոյն ուսուցիչ Կօրխանիդի, որը յօրինեց «Живое Слово» հայ, վրացի և թուրք երեխաների համար: Կօրխանիդին ընտրեց «наглядно-переводный методъ»-ը, զարդարելով իր գիրքը բազմաթիւ նկարներով, թւով մօտ 500:

1904 թ. ես «Մշակում» մի յօդուած գրեցի, գովելով Կօրխանիդիի դասագիրքը, որպէս եղածների մէջ ամենալաւը: Իմ դէմ դուրս եկաւ Սեդրակ Մանդինեան և «Մշա-

---

մորթի տակ տիֆի սպանված բակտերիաները, և անցեալ ամառ Վենսան և Շանտեմէս՝ ֆրանսիական զօրքի վրա, որ ուղարկվել էր Մարօկկօ, արել էին սրսկումներ, որոնք աջող հետևանքներ ցոյց տուին:

Բայց որովհետև որովայնատիֆի վարակը, ինչպէս և խօլերայինը, մտնում է ջրի և կերակրի հետ, ուստի նրանցից կարելի է նախապաշտպանվել տաքացնելով մինչև եփ գալը կամ գոնէ մինչև 60—70° Ց.՝ ընդունելուց առաջ:

Դժուար է նախապաշտպանվել այն հիւանդութիւնների դէմ, որոնք մտնում են մորթի միջոցով, ինչպէս սիֆիլիսը, բծաւոր և յետադարձ տիֆերը, մալարիան և դեղին տենդը: Աւելի դժուար է կռիւը այն հիւանդութիւնների դէմ, որոնք դուրս են գալիս թոքերից և տարածվում են ներս-շնչվող օդի միջոցով, օրինակ՝ բարակացաւը, որի դէմ անցեալ տարի չէ գտնված ոչ մի իսկական միջոց, հակառակ մեծ ջանքերի: Ամեն տեսակ շիճուկներ և նախապաշտպանող պատուաստները ոչ մի մխիթարական երևոյթ չեն ցոյց տուել: Կօխի բացիլն ուսումնասիրված է կատարելապէս, բայց նրա դէմ միջոց չէ գտնված մինչ այժմ: Յայտնի է, որ շատերը մարդկանցից ինքնըստինքեան նախապաշտպանվում են բարակացաւից մեզ համար անյայտ կերպով: Վաղուց նկատված է, որ մարդկային սուր ցեղերը՝ շփվելով կուլտուրական ցեղերի հետ՝ նախատրամադրվում են դէպի բարակացաւը: Մէչնիկօվը անցեալ տարի ճանապարհորդել է Կալմիկների Դաշտերը, և նրա ուսումնասիրութիւնը ցոյց է տուել հետևեալը. կալմիկները, որոնք հեռու են կուլտուրական ցեղերի շփումից, շատ սակաւ են տուժում բարակացաւից, բայց երբ նրանք գալիս են՝ օրինակ Աստրախան, տուժում են չարաչար կերպով: Ի՞նչ է պատճառը, այդ առայժմ յայտնի չէ: Հետազօտութիւններ են արվում Պաստեօրեան ինստիտուտում այդ ուղղութեամբ:

Վերջերս շատ մեծ հետաքրքրութիւն շարժեց հռչակաւոր Վասսերմանի յայտնութիւնը քաղցկեղի մասին: Բազմաթիւ հետազօտութիւններ Ամերիկայում և Եւրոպայում չարաբնոյթ ունեցող ուռոյցների մասին մի առանձին հետևանք չեն տուել. միայն անցեալ տարվայ վերջերին Վասսերմանի աշխատութիւնը կարծես տալիս է յոյս՝ նոր աւելի արմատական միջոցի նրանց դէմ:

Մի քանի տարի սրանից առաջ Վասսերմանը փորձեր անելով քաղցկեղի բջիջների կենսականութեան վրա՝ առողջ և քաղցկեղով հիւանդ մարդկանց արեան մէջ պատահմամբ գտել է, որ Տելլուրի և Սէլէնի նատրի աղերը (նրանք կենդանի բջիջների մէջ տալիս են նստուածք, վերանորոգելով մետաղի), նստում են միայն քաղցկեղի բջիջների մէջ: Հետևեալ փորձերը վարակված մկների վրա ցոյց են տուել, որ յիշեալ աղերը ոչ միայն նստում են, այլ յարուցանում են հեղուկացում և փափկացում, ոչնչացնելով քաղցկեղի բջիջները:

Ծագել է հարց, թէ ինչպէս անել, որ Սէլէնը և Տելլուրին տրվի, որոնց վրայով նրանք թափանցեն քաղցկեղի ուռուցքի մէջ: Այդ նպատակի համար կարող էին ծառայել մէկ քանի անիլեան ներկեր: Բազմաթիւ փորձերից Վասսերմանը գտաւ, որ Սէլէնի միաւորութիւնից էօզին ներկի հետ—որի [illegible]՝ քաղցկեղով հիւանդ մկներին՝ նկատել է—որ թէ սարկօմը և թէ քաղցկեղը փափկանում և ոչնչանում են. նշանակում է՝ վերոյիշեալ պրեպարատը հաւաքվում է հէնց յիշեալ ուռուցքների մէջ: Սրսկելով 2,50 պրեպարատից մկան, որի կշիռն էր 15,6, Վասսերմանը գտել է, որ մուկը բոլորովին վառ-կարմիր գոյն է ստացել, մանաւանդ ղունչը, աչքերը և թաթերը. չորրորդ սրսկումից յետոյ արդէն ուռուցքը կակղում է, դառնալով մի տեսակ դատարկ քսակ, և յետոյ նրա մէջ եղած հեղուկը ծծվում, ոչնչանում:

Վասսերմանի գիւտը եթէ իրականանայ մարդկանց վրա, ամենահրաշագործ յաղթութիւնը կը լինի գիտութեան՝ այն սարսափելի հիւանդութեանց դէմ, որոնց դէմ մինչև այժմ իսկական միջոց չը կայ, բացի խիրուրգիականից, որը նոյնպէս արմատական չէ կարելի համարել:

Անցեալ տարի երևացին մի շարք հետազօտութիւններ ռադիի մասին բժշկականութեան մէջ: Ապացուցվել է, որ նրա ճառագայթներից ոչնչանում են կենդանի էութիւնները՝ բակտերիաներ, թրթուրներ և հացահատիկներ: Աջող փորձեր արված են նրա միջոցով բժշկելու քաղցկեղը, տրախոման, գայլուռուցքը, ծննդաբիծեր և այլն:

Մինչև այժմ բուժիչ զօրութիւնը հանքային ջրերի և ցեխերի պարզվել է նրանց մէջ գտնվող ռադիակտիւ զօրութեամբ: Այդ զօրութիւնը սրանից 30 տարի առաջ նախազդուշակել էր հանգուցեալ պրոֆեսոր Բօտկինը, յանձնարարելով սրտի տապի դէմ քանդակագործական կաւացեխը (որը առանձնապէս ռադիակտիւ է). և նա կարծում էր, որ նրա մէջ զարգանում են բաբէյաշօղ էլեքտրական հոսանքներ: Այժմ պարզվում է, որ այդ հոսանքները ռադիի արտահոսումն է:

Այժմ Արևմուտքի մի քանի կուրօրտներում (բուժատեղերում) սկսել են պատրաստել ներշնչական սենեակներ, արհեստական ռադիակտիւ պրեպարատներ, ընդունելով թէ ներս և թէ սրսկելով մորթի տակ:

Եւ ապացուցվել է, որ սրսկված ռադին երկար ժամանակ՝ ամիսներով տալով ճառագայթներ արեան՝ արտայայտում է բարեբեր ազդեցութիւն զանազան ախտաբանական և բնախօսական պրօցեսների վրա: Դրանցից նուազում են ցաւերը, հանգստանում ջղային սիստեմը, զգալվում է ֆերմենտների գործողութիւնը և բարելաւվում է արեան բաղադրութիւնը:

Գերմանական բժիշկները փայլուն հետևանքներ են ստացել ռադիաբժշկութեամբ պօտագրի, ռեվմատիզմի, ջղերի և յօդերի բորբոքման դէպքերում, իսկ ֆրանսիական գիտնականները բարակացաւի բժշկութեան համար ռիօրադին, որը առաջարկել է Ունգարիայի բժիշկ Jzendeffy և որը բաղկանում է բարդ մարմնից, որի մէջ մտնում է՝ եօդ, մենթոլ և ռադի: Այդ միջոցը՝ թէ արտասահմանում և թէ Ռուսաստանում, ինչպէս դիտողութիւնը ցոյց է տալիս, ամենակարող միջոց է համարվում ամեն տեսակ տուբերկուլօզի դէմ:

Խիրուրգիայի մէջ նոյնպէս նկատվում են հրաշալի հետազօտութիւններ մանաւանդ այժմ Ամերիկայում: Ամբողջ աշխարհին յայտնի է զարմանալի օպերատիվ փորձերի մասին, որոնց արել է Նիւ-Եօրկի բժիշկ Carrel. Նա հեռացրել է օպերացիայի միջոցով շների երիկամունքները իրանց ջղերի, անօթների և միզանցքների հետ՝ փոխարինելով նրանց ուրիշ կենդանու երիկամունքներով: Նոյն աջողութեամբ յիշեալ բժիշկը փոխադրել է առանձին ներվեր, անօթներ մէկ կենդանուց միւսին: Վերջերս գերմանական խիրուրգների համաժողովում պրոֆ. Ջեֆեր զեկուցել է ազատ փոխադրման մասին մարդկանց մօտ՝ լորձաթաղանթների, ճարպային, մկանային և ջղային ոստայնների, նոյնպէս անօթների, չոր ջլերի: Ազատ փոխադրումը ոսկորների գործադրվում է լայն ձևով: Թարմ ոսկորների կտորներ իրանց ոսկրաթաղանթով վերցվում են նոր անդամահատված վերջաւորութիւններից թէ մարդկանց և թէ համապատասխան կենդանիներից: Փոխադրվելուց յետոյ ոսկրային ոստայնը մեռնում է և նրա փոխարէն կազմվում է նոր ոսկր ոսկրաթաղանթից և ոսկրի ուղեղից. Բայց որովհետև մահից յետոյ ոսկրաթաղանթի կենսականութիւնը պահպանվում է մի քանի ժամանակ, ուստի հարկաւոր զգուշութեան ձեռնարկելով՝ կարելի է վերցնել ոսկրի կտորներ թարմ դիակներից ևս: Նոյն աջողութեամբ կարելի է փոխադրել կճղակներ և մինչև անգամ ամբողջ յօդեր:

Ամերիկայում պրոֆ. Cril գործադրում է արեան արտափոխումը մէկ մարդուց միւսին: Այն մարդու ճառագայթային զարկերակը, որից վերցվում է արիւն, միացնում են արիւն ընդունողի երակի հետ. և այդ միջոցը սաստիկ արիւնհոսութեան կամ բաղիման—կաւեցնելուց՝ թունաւորման և երիկամունքների բորբոքման—դէպքերում փրկարար միջոց կարելի է համարել:

Բժ. Բ. Աղասարեան

կում» գրած իր յօդուածով ապացուցանում էր, որ յոյժ անկարող է հայ երեխաների համար ռուսերէն դասագրքեր կազմել, ուստի առաջարկում էր ուսուցիչներին մերժել այդ։

Չը նայելով Մանդինեանի քննադատութեան, Կօրխանիդիի դասագրքերը տարածվեցին մեր դպրոցներում և մինչև օրս ունեցել են 7 տպագրութիւն։ Ապա հանդէս եկաւ ինքը Մանդինեան և «օրգանական մեթօդով» կազմեց ռուսերէնի դասագրքերը մեր դպրոցների համար։ Այս դասագրքերը նոյնպէս ծանր էին երեխաների համար և դժուարամարս։

Սրանից յետոյ հանդէս եկաւ Ս. Դաղբաշեան և կազմեց ռուսերէնի դասագիրքը հայ երեխաների համար։ Դաղբաշեանը իր նշանաւոր բառարաններով յայտնի է հայ հասարակութեան, ուստի հետաքրքրական էր նրա կարծիքն իմանալ։ Եւ Դաղբաշեանը ընտրեց «թարգմանական» մեթօդը, դատապարտելով «բնականը»։

«Գուցէ «բնական» մեթօդի գործադրութիւնը հօտենտօտների երկրում մուտք ունենայ, որովհետև հօտենտօտները, չունենալով գրականութիւն և գրական լեզու, հնարաւորութիւն չունեն ռուսերէն բառերը իրանց մայրենի լեզուով թարգմանելու։ Սակայն մենք, փառք Աստուծոյ, ունենք անցեալ, մշակված լեզու և գրականութիւն։ Հարկ չը կայ, որ մեր մանուկները ռուսերէն սովորելու համար հայերէնը մոռանան. ընդհակառակը, մեր դարաւոր փայփայած իղձն է եղել սովորեցնել մեր մանուկներին և մայրենի լեզուն և մեր հայրենի լեզուն, ռուսերէնը, որի գիտութիւնը մեզ համար մայրենի լեզուի չափ անհրաժեշտ է։ Թող այս լաւ գիտենան հայ, բայց հօտենտօտային գաղափարներով տոգորված վարժապետներից և վարժուհիներից ոմանք»։ (II մ. եր. 143)։

Սրանից աւելի ասել հարկաւոր չէ։ Վիճել այն հարցի մասին, որ անվիճելի ակսիոմա է, բոլորովին աւելորդ է և ի զուր ժամավաճառութիւն։ Դիդակտիկական ամենաէական պահանջներից մէկն է. переходить при обученіи отъ извѣстнаго къ неизвѣстному, отъ простого къ сложному, отъ близкаго къ отдаленному. Հայ երեխաները հայերէն իմանում են, հետևապէս նրանք օտար լեզուներ (օրինակ ռուսերէն) պէտք է սովորեն մայրենի լեզուի օգնութեամբ։ Ով ժխտում է այս, նա, ըստ Դաղբաշեանի, հօտենտօտ է։

Թարգմանական մեթօդի հակառակորդները ասում են, որ թարգմանութիւնով ռուսերէն խօսել անկարելի է սովորեցնել։ Բոլորովին սխալ է։ Եթէ մեր երեխաները չեն կարողանում ռուսերէն խօսել, դրա պատճառն այն է, որ ընտանիքներում, շրջապատողների մէջ քիչ է գործածվում ռուսերէն։ Դպրոցը միայն չէ կարող լեզու տարածել, եթէ կեանքում չէ գործադրվում։ Երեխան պէտք է հասկանայ ռուսերէն յօդուածի բոլոր բառերը մայրենի լեզուով, պէտք է ստուգել այդ և ապա ռուսերէն հարց-պատասխաններով վարժեցնել նրանց խօսելու մէջ, իսկ խօսելը առանց հասկանալու անկարելի է սովորեցնել։ Այս միտքը պաշտպանում է և Դաղբաշեանը։

Դաղբաշեանի դասագրքի I մասը բաղկացած է այբբենարանից և առաջին ընթերցարանից։ Այբբենարանն երեխաները կարող են սովորել մի ամսում, և սա դասագրքի ամենալաւ յատկութիւնն է։ Նշանաւոր Ուշինսկին իր «Русское Слово» դասագրքով մի ամսում երեխաներին սովորեցնում է կարդալ-գրել բոլոր տառերով, մինչդեռ մեր մանկավարժները (Կօրխանիդի, Աղայեան) ձգձգում են այբբենարանը և երեխաները մի քանի ամսում հազիւ են կարողանում բոլոր տառերը սովորել։ Դա ձանձրալի և տաղտկալի է երեխաների համար։ Ուշինսկին հետևում է Ն. Տէր-Ղեւոնդեան, որի դասագրքով նոյնպէս կարելի է 1—2 ամսում սովորել բոլոր տառերը։

Առաջին ընթերցարանը բաղկացած է 58 փոքրիկ, դիւրըմբռնելի, պարզ, գրաւիչ պատմուածքներից, և ոտանաւորների բոլոր բառերը թարգմանված են հայերէն։ Այստեղ չը կան անկապ նախադասութիւններ, որպիսիք կան Կօրխանիդիի դասագրքի մէջ, որոնք բոլորովին աւելորդ են։

Դասագրքի II մասը, որը նորերս է լոյս տեսել, պարունակում է 60 պատմական յօդուածներ և ոտանաւորներ։ Այս յօդուածները նոյնպէս պարզ են, կարճ, գրաւիչ, հասկանալի։ Դաղբաշեանը խուսափում է նկարագրական յօդուածներից, և սա գլխաւոր առաւելութիւններից մէկն է։ 10 տարեկան հայ երեխային դժուար է տալ դաս՝ նկարագրական յօդուած ռուսերէն։ Հարկաւոր բառեր թարգմանված են հայերէն։ Կան վարժութիւններ ռուսերէն լեզուով՝ խօսել սովորեցնելու համար։ Կայ տարրական քերականութիւն, որը խնամքով է կազմված, իսկ վերջում բառարան ռուսերէն-հայերէն։

Առաջարկում ենք մեր ուսուցիչներին ձեռք բերել Դաղբաշեանի դասագրքերը և փորձել։ Մենք հաստատ համոզված ենք, որ ամենքը նպաստաւոր կարծիք կը յայտնեն, որովհետև մեր ռուսերէն դասագրքերի մէջ նրա դասագրքերն ամենից լաւն են ներկայումս։

Դաղբաշեանը մերժում է պատկերներ, հետևելով Լեվ Տօլստօյին, որ իր ռուսերէն դասագրքում ասում է. «исключено все несущественно необходимое... картинки, составляющія роскошь, а не потребность азбуки и потому развлекающія вниманіе ученика»։ Այս պատճառով Դաղբաշեանը պատկերներ չէ ընդունում։ Բացի սրանից նա ասում է, որ մայրենի լեզուի դասագրքերը պատկերազարդ են, ուրեմն աւելորդ է ռուսերէն դասագրքերի մէջ եւս պատկերներ ընդունել։

Սակայն մեր կարծիքով պատկերներն որոշ ազդեցութիւն են թողնում մանուկների վրա, սիրելի են լինում և գրաւիչ, ուստի ցանկալի է, որ Դաղբաշեանը նոր հրատարակութիւնները դարձնէ պատկերազարդ։ Հարկաւոր է գրքերը տպագրել աւելի խոշոր տառերով. ներկայ դասագրքերի տառերը մանր են։ Թուղթն էլ պէտք է լինի աւելի սպիտակ և հաստ։

Յ. Ք. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Հ. Բ. Ընկ. անդամակցական վճարի մասին

Թիֆլիս, 24 փետրվարի

Կ. Հ. Բ. Ընկ. կանոնադրութեան գործադրութիւնը այս վերջին 4 տարվայ ընթացքում, սկսած Ընկ. վերաբացման օրից, ցոյց տուեց, որ միատեսակ անդամակցական վճարը, ամենուրեք 5 ր. տարեկան, գաւառներում դժուարութիւն է յարուցանում, և մասամբ դրա շնորհիւ գաւառական ճիւղերը չեն կարողանում շատացնել իրանց անդամների թիւը։

Ի նկատի առնելով այդ հանգամանքը, խորհուրդս, համաձայն ընդհ. ժողովի որոշման, դիմեց պատշաճաւոր իշխանութեանը՝ փոփոխելու կանոնադրութեան այն կէտը, որը վերաբերում է անդամակցական վճարին։

Եւ ահա խորհուրդը յայտարարում է ի գիտութիւն, որ կառավարութեան թոյլտուութեամբ այսուհետև սահմանված է անդամակցական վճարը հետևեալ կերպով.

1) Նահանգական քաղաքների համար 5 ր., 2) Գաւառական քաղաքների՝ 3 ր., 3) Գիւղերի և աւանների՝ 2 ր.։

Անդամակցական վճարը կարելի է տալ երկու անգամ, ամեն մի կիսամեակի համար առանձին։

Ստեղծելով այս դրութիւնը, խորհուրդս յայտնում է իր տեղական ճիւղերի վարչութիւններին, որոնց թիւը այժմ հասել է 52-ի, որ նրանք աշխատեն շատացնել իրանց անդամների թիւը, և յոյս ունի, որ այն վայրերի ձեռնհաս անձինք, ուր չը կայ ճիւղ, կաշխատեն հիմնել նոր ճիւղեր՝ ծառայելու այն բարեգործական, կրթական և կուլտուրական նպատակներին, որոնք նախատեսված են Ընկ. կանոնադրութեան մէջ։

Իսկ Ընկ. կանոնադրութեան §§ 1-ի և 2-ի մէջ ասված է հետևեալը.

«§ 1. Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան տարածմանը հայերի մէջ Կովկասում և օգնել նրանց նիւթականապէս։

«§ 2. Այս նպատակին հասնելու համար Ընկերութիւնը՝ օրէնքով սահմանված միջոցներով ու կարգով՝ իր ույժերի զարգացման համեմատ՝

«ա) Պահպանում է արդէն գոյութիւն ունեցող հայոց ուսումնարանները, հիմնում է և նիւթականապէս նպաստում է նորերի բացմանը։

«բ) Օժանդակում է ժողովրդի մէջ արհեստներ տարածելուն և նրա նիւթական դրութիւնը բարելաւելուն։

«գ) օգնում է ուսանողներին ուսման մէջ։

«դ) Լոյս է ընծայում գրքեր ու պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար և այլ գրականական երկասիրութիւններ։

«ե) Հիմնում է տպարաններ, վիմագրատներ, մուզէումներ, գրադարաններ և ընթերցարաններ։

«զ) Հիմնում է հիւանդանոցներ, ամբուլատորիաներ (հիւանդանոց երբեմն հիւանդների համար), ապաստարաններ, հասարակական ճաշարաններ, թէյատներ, էժանագին բնակարաններ, գիշերելու տներ, պատսպարաններ, հանրակացարաններ, աշխատանքի տներ և այլ բարեգործական հաստատութիւններ։

«է) Օգնում է տառապեալներին ժողովրդական աղէտների ժամանակ, այն է՝ սովի, տարափոխիկ հիւանդութիւնների, հրդեհի և այլն, որի համար՝ իւրաքանչիւր առանձին դէպքում, պատշաճաւոր թոյլտուութեամբ՝ բացում է հանգանակութիւն, կազմակերպում է սանիտարական մասնախմբեր կամ ուղարկում է իր կողմից լիազօրներ։

«ը) Օգնում է կարեւոր դէպքերում նիւթականապէս և բարոյապէս իր տեղական ճիւղերին, ինչպէս և հայկական այլ ընկերութիւններին և հաստատութիւններին»։

Կ. Հ. Բ. Ընկ. Խորհուրդ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Բարձրագոյն հաստատութեան է ներկայացված Կուրլովին, Սպիրիդովիչին, Վերիգինին և Կուլեաբկօյին դատարանին յանձնելու որոշումը։

✦ «Р. Слово»-ն հաղորդում է. «Մոսկվայի հայ գաղութի մէջ հանգանակութիւն է բացված Շահ-Ազիզի գերեզմանի վրա մահարձան կանգնեցնելու համար։ Հանգուցեալի ազգականները ստանալով 150,000 րուբլու ժառանգութիւն՝ մոռացել են գերեզմանը, որ այժմ ցաւալի վիճակի մէջ է»։

✦ Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են, որ «Դաշնակցութեան» գործի դատավարութիւնը կը տևէ դարձեալ մօտ 2 ամիս և ապրիլի կէսից շուտ չի վերջանայ։ Զատկական արձակուրդների հարցը դեռ վճռված չէ և կախված է նրանից, թէ ինչ շրջանի մէջ կը լինի գործի քննութիւնը Զատկի նախօրեակին։

✦ Կ. Պոլսից հեռագրում են, որ «Դաշնակցութիւնը» երիտասարդ թիւրքերի հետ համաձայնութիւն կապեց նախընտրական պայքարին միասին գործելու մասին։ Դաշնակցականները պահանջում են 20 պատգամաւորական լիազօրութիւններ և մի քանի բարենորոգումներ Հայաստանում։

✦ Մեծ պետութիւնների նոր միջնորդութիւնը անաջող անցաւ Թիւրքիայի և Իտալիայի առաջ։ Երկու կռուող կողմերը առանց «ցերեմօնիայի» մերժեցին հաշտութիւն կնքելու առաջարկութիւնը։ Այժմ մեծ պետութիւնները Պիլատոսի նման լուանալու են իրանց ձեռքերը և մի կողմ քաշվելու։ Իսկ թէ յետոյ ինչպէս պէտք է դիմանայ Թիւրքիան իտալական նաւատորմի և զօրքերի «կոտորածներին», այդ մնում է հասկանալ երիտասարդ-թիւրքերի քաղաքագէտ գլուխներին։

✦ Ռուսաստանը Թիւրքիայից պահանջեց վարձատրութիւն՝ Բէյրութում սպանված ռուսահպատակ հրէայի համար։

✦ Էկս-շահը բոլորովին ծպտեալ կերպով իր երկու հաւատարիմ մարդկանց հետ «Կարս» շոգենաւով մեկնեց Բագու Աշուր-Աղէ նաւահանգստից։ Բագուից Մահմէդ-Ալին երկաթուղով կը մեկնի Օդեսսա, ուր աւարտելով իր մասնաւոր գործերը՝ կանցնէ Անգլիա, ընդմիշտ այնտեղ ապրելու։

✦ Մահմէդ-Ալին, հեռանալով Պարսկաստանի սահմաններից, ստորագրութեամբ պարտաւորվել է կառավարութեանը՝ այլևս երբեք չը վերադառնալ Իրան և հրաժարվում է գահին տիրապետելու պահանջներից։ Մահմէդ-Ալին տարեկան ստանալու է 75,000 թուման պարսից գանձարանից։

✦ Մահմէդ-Ալիի Պարսկաստանից հեռանալովը, բնականաբար, որոշ ժամանակով դժգոհելու են կիսավայրենի քիւրդերը և թիւրքմէնները։ Ահա այդպիսիներին խաղաղեցնելու համար պարսից կառավարութիւնն առաջարկել է Եփրեմին, ռուսաց և անգլիական միսիաների հետ համաձայնվելուց յետոյ, արշաւանքի ձեռնարկել դէպի Խօրասան, Քիրմանշահ և Աստրաբադ՝ իշխանութեան պրէստիժը բարձր պահելու նպատակով։

✦ Պեկինում զինուորական ապստամբութիւնը բռնկվեց նոր ույժով։ Պատժիչ զօրախմբերը միացել են կողոպտիչներին։ Օֆիցերները ծեծի ու քարկոծութեան են ենթարկվում։ Բոլոր պրինցների պալատները քարուքանդ են արված։ Պետական խնամակալը և կայսրուհին ապաստանեցին Իւանշիկայի պալատում։ Պրինցները մի կերպ իրանց գցեցին ռուսաց հիւպատոսարանը։ Քաղաքի առևտրական մասը հրդեհի մէջ է։ Եապօնական թաղերը հրդեհված են։

✦ Չին ռէակցիոներները օգտվելով այժմ կատարվող դէպքերից, փութով պատրաստութիւններ են տեսնում Մուկդէնում Իւանշիկայի դէմ արշաւանք գործելու համար։ Ռէակցիոնական շարժման գլուխ կանգնած է պրինց Զաին։

✦ Մանջուրները խմբվում են Զուչինգիւի շուրջ, որ հետամուտ է իրան բօգդիխան հռչակել և գրաւել չինական գահը։ Սպասվում են ամենալուրջ բնաւորութեան բարդութիւններ ու անկարգութիւններ։ Առհասարակ ամբողջ Մանջուրիայում սաստկութեամբ տարածվում է հակայեղափոխական շարժումը։

✦ Իւանշիկայի բոլոր ջանքերը՝ հանգստացնելու զայրացած զօրքին և ժողովրդին՝ միանգամայն ապարդիւն են։ Լօնդօն հեռագիր է ստացվել, որ Պեկինում ապստամբները պաշարել են եւրոպական դեսպանական քաղաքամասը։ Հրդեհը սարսափելի արագութեամբ ծաւալվում է։ Այժմ կարելի է վստահ ասել, որ շարժումը ստացել է հակաեւրոպական բնաւորութիւն։ Սպանված են մի քանի եւրոպացիներ։ Տրամադրութիւնը ճնշված է։ Եւրոպական հիւպատոսները հեռագիրներով զօրքեր են պահանջում։

✦ Եապօնիան յանկարծակիի գալով Պեկինում կատարվող դէպքերից, որոնց ժամանակ ամենից շատ տուժում են եապօնացիները, շտապով զօրքեր ուղարկեց Պեկին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

23 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ոստիկանութեան դեպարտամենտի վերատեսուչ Զուեւլին ամենաղորմածաբար հրամայվեց ներկայ լինել սենատում։

«Бирж. Вѣд.»-ի խմբագիրը ենթարկվեց 250 ր. տուգանքի փետրվ. 21-ին տպված ոտանաւորի համար։

«Звѣзда»-ի փետրվ. 23-ի համարը գրաւվեց։ Խմբագիրը ենթարկվում է պատասխանատուութեան 129-րդ յօդուածով։

Հողային մասնաժողովը ընդունեց այն օրինագիծը, որով Ապշերոնեան թերակղզու նաւթաբեր շրջանների հողերը տրվելու են շահագործութեան համար։

Մինիստրների խորհուրդը համաձայնեց ներքին գործերի մինիստրութեան առաջարկութեան հետ՝ յատկացնելու պետական մատակարարական դրամագլխից 3.990,000 րուբլի։

Նոր ծրագրով 5 տարվայ ընթացքում կառուցվելու են նոր ռազմանաւեր, որի համար յատկացված է 502.744,567 ր.։

Զինուորական մինիստրին իրաւունք է տրված օրէնսդրական հաստատութիւններին ներկայացնել մի առաջարկութիւն՝ աւելացնելու 1912 թ. նորակոչների թիւը։

ՄՕՍԿՎԱ. Զէմստվօների ներկայացուցիչների խորհրդակցութիւնը անհրաժեշտ գտաւ գումարել սեպտ. 10-ին համառուսական համազէմստվային համագումար տնայնագործական իրերը սպառելու հարցի առթիվ։

Քաղաքը ձեռնարկել է կառուցելու աշխատանքի բօրսայի շինութիւն։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ. Տեղեկութիւն է ստացվել, որ Ամունդսէնը հասել է հարաւային բեւեռին։

ՉԻԳՈՒԻԱՐԳՈՒԱ. Գոմէզը յայտարարվեց ժամանակաւոր նախագահ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժեթղթերի կուրսերը
24 փետրվարի

I կ. ներք. փոխ. խ. տոմս.	455 ր. — կ.
II » »	382 ր. — կ.
III Ազնուակ. բանկ. »	332 ր. — կ.
4% Պետական ռենտա	90 ր. 87½ կ.
5% Արտաք. » 1906 թ.	103 ր. 50 կ.
5% Ներքին փոխառ. 1905 »	
I հրատ.	103 ր. 50 կ.
5% » II հրատ.	99 ր. 75 կ.
5% Պետ. Ազնուա. բանկ. գր. թ.	99 ր. 75 կ.
4½ » » » »	93 ր. 50 կ.
4% » » » »	90 ր. 75 կ.
3½% » » » »	87 ր. 25 կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	100 ր. — կ.
4½% » » » »	96 ր. 25 կ.
4% » » » »	92 ր. 50 կ.
5% Արտաք. փոխառ. 1908 թ.	103 ր. 50 կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդօն 10 ֆ. ստեր.	95 ր. — կ.
Բեռլին 100 մարկ	46 ր. 40 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր. 70 կ.
Թաւրիզ 10 ղռան	1 ր. 80 կ.
Կ. Պոլիս 1 լիրա	8 ր. 65 կ.

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.
Զմեռային երթեւեկութիւն
ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ
Մեկնում են Բաթումից
I Պօստային-մարդատար շոգենաւեր.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » »
Շաբաթ » 12 » ուղղակի »
II Մարդատար շոգենաւեր.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »
III Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » »
Ժամերը Պետերբուրգի են։
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՕՍՏԱՅԻՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի, Բօլգարիայի, Մակեդօնիայի, Սերբիայի, Անատօլիայի-Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։
ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ
Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Րիգա, Լիբավա և Րէվել։
Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելիամինովսկայա փողոց, № 18.
Հեռախօս № 11.
Ընդունվում են եւ ապահովացվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։
Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց
(շ.) 0—37

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Զմեռային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 **գնացքը՝** (I, II և III կարգի վագօն.) 10 ժ. 20 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 44 ր. կէսօր., Գանձակ՝ 3 ժ. 18 ր. ցեր., Եւլախ՝ 4 ժ. 52 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 35 ր. երեկ., Բագու՝ 11 ժ. 43 ր. գիշ.։ **Մարդատար** № 6 **գնացքը՝** (միայն I և II կարգի վագօն.) 3 ժ. 33 ր. ցեր., Աղստաֆա է հասնում 6 ժ. 29 ր. երեկ., Գանձակ՝ 9 ժ. 46 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 53 ր. գիշ., Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 20 ր. գիշ., Բագու՝ 8 ժ. 11 ր. առաւ.։ **Պօստատար** № 4 **գնացքը՝** (բոլոր կարգերի վագօններով) 11 ժ. 18 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 2 ժ. 12 ր. ցեր., Գանձակ՝ 5 ժ. 29 ր. առաւ., Եւլախ՝ 7 ժ. 30 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 01 րօպէին կէսօրվայ, Բագու՝ 4 ժամ 52 րօպէին ցերեկվայ։ **Խառն** № 106 **գնացք՝** (IV կամ III կարգի վագօններով, երբ կարևորութիւն պատահի) 6 ժ. 32 ր. առաւ., Աղստաֆա է հասնում 10 ժ. 42 ր. առաւ., Գանձակ՝ 2 ժ. 57 ր. ցեր., Եւլախ՝ 6 ժ. 25 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 16 գիշ., Բագու՝ 7 ժ. 12 ր. առաւ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ Մարդատար № 74/75 **գնացքը՝** (բոլոր կարգի վագօններով) 11 ժ. 48 ր. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 7 ժ. 01 ր. առաւ., Ալէքսանդրօպօլ՝ 10 ժ. 31 ր. առաւ., Էջմիածին կայար.՝ 3 ժ. 45 ր. ցեր., Ուլուխանլու՝ 4 ժ. 12 ր. ցեր.։ (Առանց Երևան մտնելու։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը Երևան ուղևորվում է 4 ժ. 37 ր. ցեր., և Երևան հասնում 5 ժ. 20 ր. երեկոյեան)։ Նախիջևան՝ 9 ժ. 26 ր. երեկ., Ջուլֆա՝ 11 ժ. 10 ր. երեկ.։ **Մարդատար-ապրանքատար** № 78/79 գնացքը. 5 ժ. 34 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում՝ 12 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 32 ր. գիշ., Էջմիածնի կայարան՝ 4 ժ. 41 առաւ., Երևան՝ 11 ժ. 06 ր. առաւ., և այլևս դէնը չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ Մարդատար № 5 **գնացքը՝** (բոլոր կարգի վագօններով) 5 ժ. 45 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 51 ր. եր., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առաւ., **Պօստատար** № 3 **գնացքը՝** (բոլոր կարգի վագօններով 9 ժ. 50 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 1 ժ. 56 ր. կէսօր., Բաթում՝ 11 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար** № 7 **գնացքը՝** (II և III կարգի վագօններով) 10 ժ. 38 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 08 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 42 ր. կէսօրին։

ԲՕՐԺՕՄ՝ մարդատար № 9/66 **գնացքը՝** (բոլոր կարգի վագօն.) 3 ժ. 23 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 02 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 02 ր. գիշ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ Մարդատար № 5 **գնացքը՝** 5 ժ. 07 ր. երեկ.։ **Պօստատար** № 3 **գնացքը՝** 8 ժ. 54 ր. առ.։ **Արագ** № 1 **գնացքը՝** 9 ժ. 56 ր. գիշ., որը այլևս դէնը չէ գնում։ **Խառն** № 107 **գնացքը՝** 9 ժ. եր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար № 72/73 **գնացքը՝** 8 ժ. 25 ր. առաւ.։ **Մարդատար-ապրանքատար՝** № 80/81 **գնացքը՝** 1 ժ. 40 ր. ցերեկվայ։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ Մարդատար № 6 **գնացքը՝** 2 ժ. 50 ր. ցերեկ., **Պօստատար** № 4 **գնացքը՝** 10 ժ. 28 ր. գիշ.։ **Մարդատար** № 8 **գնացքը** 5 ժ. 33 ր. առաւ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ԲՕՐԺՕՄԻՑ՝ Մարդատար № 6/10 **գնացքը՝** 7 ժ. 58 ր. առաւօտեան։

Ծանօթութիւն.—Զմեռային երթևեկութեան միջոցին որոշված է Թիֆլիսից Պետերբուրգ (յետ և առաջ) անմիջական, առանց վագօն փոխելու հաղորդակցութիւն՝ Բագուի-Ռօստովի-Խարկովի վրայով Անդրկովկասեան գծի արագ №№ 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է մէկ միքստ վագօն I և II կարգի և մէկ վագօն III կարգի. բոլոր տեղերը պլացկարտերով են.

Նոյնպէս հաստատվում է Թիֆլիս-Մօսկվա յետ և առաջ, առանց վագօն փոխելու, հաղորդակցութիւն՝ Բագուի-Ռօստովի և Կօզլովի վրայով՝ արագ № 1 և 2 գնացքներով։ Գնացքում լինելու է Միջազգային ընկ. մէկ միքստ վագօն I և II կարգի, որի համար վերցվելու է յաւելեալ արժէք. ամեն մէկ հազար վերստին 8 ր. I կարգում և 6 ր. II կարգում։ Թիֆլիսից-Մօսկվա հաշվում է 2877 վերստ։

Առանց վագօն փոխելու հաղորդակցութիւնը Թիֆլիս-Բագու-Ռօստով յետ և առաջ կատարվելու է արագ № 1 և 2 գնացքներով։ Բոլոր կարգերի տեղերը պլացկարտով են։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ
„ԲԱՑԱՅԷԼ“
Երևանեան հրապ., Պուշկինեան փ. № 1.
Օգտվեցէք դէպքից! Գները պակասեցված են կարճ ժամանակով։
Վիզիտնի նկարների դիւժինը 2 ր., կաբինէտնին՝ 4 ր., մի դիւժին բացիկները 1 ր. 50 կ.։ Խմբովին կամ մեծադիր լուսանկարները մատչելի գներով։ Պատուէրները կատարվում են բաւարարեցուցիչ։
(ա.օ.) 114. 30—5

Մի հայ օրիորդ, որ գտնվում է ամենաչքաւոր դրութեան մէջ և զուրկ է ապրուստի միջոցներից, խնդրում է հայ ընտանիքներին հնարաւորութիւն տալ իրան կար անել։ Օրիորդը գիտէ կարել թէ երեխաների և թէ մեծերի հագուստներ ամեն տեսակի և աշխատանքը կատարում է էժան գներով։ Նաև ընդունում է ամեն կարգի պատուէրներ և կատարում է շուտ և մաքուր։ Դիմել Русская ул. домъ № 3, кв. № 5. Հարցնել Նատաշա Սարգսեանին։ 1—1

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ
✦ Տպագրվում է արդէն ✦
Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅԻ
ՀԱՋԻ ՄՈՒՐԱԴԸ
1—1

ՁՐԻ ԳԻԼԶԱՆԵՐ
ՁՐԻ ԳԻԼԶԱՆԵՐ
ԱԿՑԻՈՆ. ԸՆԿ.
ՄԻՐ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
I եւ II տեսակի ծխախոտից
ՄԷԿ ՖՈՒՆՏ
ԳՆՈՂՆԵՐԻՆ
տրվում է պրեմիա
500 ՀԱՏ ԳԻԼԶԱ
Բացի ԿԱՂԱՊԻ եւ ԿԱՐՏՈՆԷ գիլզաներից
Փաբր. խանութը Դվորցովայա փող.
[illegible]
ՁՐԻ ԳԻԼԶԱՆԵՐ
[illegible]
84. 5—5 (շ. և.)

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.